

9490

101


ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ

ԾՐԱԳԻՐՆ

ՈՒ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒՅԹՅՈՒՆԸ

203




ՀԿԽ
Կ - 68

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՊ. Ա. Ե - 1929

ЗКИ
4-68

25 SEP 2006
1 DEC 2009




ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻԱՆԱԼԻ

ԾՐԱԳԻՐՆ

ՈՒ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎՈ - 1929

13.07.2013

9490

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ **ԾՐԱԳԻՐԸ**

**ՀԵղունքած և VI կոնգրեսում 1928 թվականի
սեպտեմբերի 1-ին Սոսկվայում**




42734.63

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմպերիալիզմի դարաշրջանը մահացող կապիտալիզմի դարաշրջանն եւ 1914—1918 թ.թ. համաշխարհակին պատերազմը և նրա կողմից հրահրված՝ կապիտալիզմի ընդհանուր կրիպիսը, անմիջական արդյունքը հանդիսանալով համաշխարհային տնտեսության արտադրողական ուժերի աճման և այդ տնտեսության պետական անջրապետների միջև յեղած սուր հակասության, ցուց տվին և ապացուցին, վոր կապիտալիստական հասարակության ներսում արդեն հասունացել են սոցիալիզմի նյութական նախադրյալները, վոր հասարակության կապիտալիստական պատյանը անտառնելի կապանքներ և դարձել մարդկության հետագա զարգացման համար, վոր պատմությունը որակարգի յե դնում կապիտալիստական լուծը հեղափոխական ճանապարհով տապալելու խնդիրը:

Իմպերիալիզմը հպատակեցնում ե ֆինանսական-կապիտալիստական պլուտոկրատիայի դիկտատուրային բոլոր յերկրների. պլուտոտարների ահագին մասսաներ, սկսած կապիտալիստական հզորության կենտրոններից և մինչև գաղութային աշխարհի ամենահեռավոր անկյունները. իմպերիալիզմը տարերակին ուժով դրսեռում և խորացնում ե կապիտալիստական հասարակության բոլոր հակասությունները, ծայրահեղ սահմանի յե հացնում դասակարգա-



յին ձնշումը, սրում մինչ բացառիկ լարման աստիւ-
ճանի պայքարը կապիտալիստական պետությունների
միջն, առաջացնում և համաշխարհային թափի իմպե-
րիալիստական պատերազմների անխուսափելիությու-
նը, վորոնք ցնցում են տիրապետող հարաբերու-
թյունների ամբողջ սիստեմը, - և յերկաթե անհրա-
ժեշտությամբ տանում և դեպի պրոլետարիատի նամած-
խարհային հեղափոխությունը:

Ֆինանսական կապիտալի շղթաներով վողջ աշ-
խարհը կապկապելով, բոլոր յերկրների, ժողովուրդ-
ների և ցեղերի պրոլետարներին արյունով, յերկաթով
ու սովոր հարկադրելով կանգնել իր լծի տակ, հսկայա-
կան չափով սրելով պրոլետարիատի շահագործությու-
նը, ձնշումն ու սորկացումը և նրա առաջ դնելով իշշ-
խանությունը նվաճելու անմիջական խնդիրը, իմպե-
րիալիզմն ստեղծում և անհրաժեշտություն բանվոր-
ների ամենասերտ համախմբման՝ բոլոր յերկրների
պրոլետարների միասնական միջազգային բանակի
մեջ, անկախ պետական սահմաններից, ազգային,
կուտուրական, լեզվային ու ցեղային տարբերու-
թյուններից, սերից կամ արհեստից: Այսպիսով՝ զար-
գացնելով և ավարտելով սոցիալիզմի նյութական նա-
խադրյաների ստեղծման պրոցեսը, իմպերիալիզմը
դրա հետ միասին համախմբում և իր սեփական գե-
րեզմանափորերի բանակը, պրոլետարիատին դնելով
բանվորների միջազգային մարտական ընկերություն կազ-
մակերպելու անհրաժեշտության առաջ:

Մյուս կողմից, իմպերիալիզմը հատում, բաժանում և
բանվոր գասակարգի ամենից ապահոված մասը նրա
հիմնական մասսաներից: Իմպերիալիզմի կողմից կաշու-

ված և անառակացված բանվոր դասակարգի այդ վերնա-
շերտը, վոր սաղմական կուսակցությունների ղեկավար
կադրերն ե կազմում, շահագրգուված և զաղութների
իմպերիալիստական թալանում, նվիրված «իր» բուր-
ժուազիային և «իր» իմպերիալիստական պետությա-
նը, դասակարգային վճռական ճակատամարտերում
պրոլետարիատի դասակարգային թշնամու կողմն ան-
ցավ: Սոցիալիստական շարժման պառակտումը 1914
թ., վոր հետեւնք եր այդ գավաճանության, և իրոք
բուրժուական բանվորական կուսակցություններ գար-
ձած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների
հետագա գավաճանությունները ցույց տվին, վոր մի-
ջազգային պրոլետարիատն իր պատմական միասիան՝
իմպերիալիզմի լծի տապալումը և պրոլետարական
դիկտուրայի նվաճումը՝ կարող և կատարել միայն
սոցիալ-դեմոկրատիայի ղեմ մզգող անխնա պայքա-
րում: Ուստի միջազգային հեղափոխության ուժերի
կազմակերպումը հնարավոր և գառնում միմիայն կոմ-
մունիզմի պլատֆորմի վրա: Բանվոր դասակարգի
շարքերում ինպերիալիստական գործակալություն
դարձած՝ սոցիալ գեմոկրատիայի ոպպորտյունիստա-
կան Յերկրորդ հնտերնացիոնալին անխուսափելիորեն
հակաղղվում և Յերրորդ Կոնֆունիսական ինտերնա-
ցիոնալը՝ բանվոր դասակարգի միջազգային կազմա-
կերպությունը, վորն իր մեջ մարմնացնում և ամբողջ
աշխարհի հեղափոխական բանվորների իսկական միաս-
նականությունը:

1914—1918 թ.թ. պատերազմն առաջացրեց նոր,
հեղափոխական ինտերնացիոնալ ստեղծելու առաջին
փորձերը, վորպես հակակլիպ Յերկրորդ, սոցիալ-շոփի-

Նիստական ինտերնացիոնալին և վորպես գործիք՝ հականրված առաջ համար ուղղմաշունչ իմպերիալիզմին (Ցիմմերվալդ, Կինտալ): Ռուսաստանի պրոլետարիատի հաղթական հեղափոխությունը զարկ տվեց կոմմունիստական կուսակցությունների գոյացման կապիտալիզմի կենտրոններում և գաղութներում: 1919 թվականին հիմնվեց Կոմմունիստական ինտերնացիոնալը, վոր համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ գործով, հեղափոխական պայքարի պրակտիկայով միավորեց յելլոպական ու ամերիկան պրոլետարիատի առաջավոր շերտերը Զինաստանի և Հնդկաստանի պրոլետարների հետ, Աֆրիկայի և Ամերիկայի սևամորթ աշխատավորների հետ:

Լինելով պրոլետարիատի միասնական ու կենտրոնացած միջազգային կուսակցությունը, Կոմմունիստական ինտերնացիոնալը հանդիսանում է միակ շարունակողը Առաջին Ինտերնացիոնալի սկզբունքների, վորոնք կիրառվում են հեղափոխական պրոլետարական շարժման նոր, մասսայական հիմքի վրա: Առաջին իմպերիալիստական պատերազմի, կապիտալիզմի հեղափոխական գնաժամամբ հետագա շրջանի, Յելլոպայում և գաղթավային յերկներում տեղի ունեցած մի շարք հեղափոխությունների փորձը, պրոլետարիատի դիկտուրայի և սոցիալիզմի կառուցման փորձը ԽՍՀՄ. Կոմմունիստական ինտերնացիոնալի բոլոր սեկցիաների աշխատանքի փորձը, վոր վակերացված ե նրա կոնգրեսսների վճիռների մեջ. վերջապես, իմպերիալիստական բուրժուազիայի և պրոլետարիատի մեջ մղվող պայքարի ավելի ու ավելի միջազդայնացում, — այս ամենը առաջացնում է Կոմմունիստական

ինտերնացիոնալի միասնական և բոլոր սեկցիաների համար ընդհանուր ծրագրի անհրաժեշտությունը: Այսպիսով, կի ծրագիրը, լինելով պրոլետարիատի միջազգային հեղափոխական շարժման ամբողջ պատմական փորձի քննադատական բարձրագույն ընդհանրացումը, հանդիսանում է համաշխարհային պրոլետարիատի մղվող պայքարի ծրագիր, համաշխարհային կոմմունիզմի համար մղվող պայքարի ծրագիր:

✓Միավորելով հեղափոխական բանվորներին, վորոնք իրենց յետերից տանում են ճնշվածների և հարստահարվածների միլիոնավոր մասսաներ ընդդեմ բուրժուազիայի և նրա «սոցիալիստական» գործակալների, Կոմմունիստական ինտերնացիոնալն իրեն համարում է վորպես պատմական հաջորդը «Կոմմունիստների Միության» և Առաջին ինտերնացիոնալի, վորոնք գտնվել են Մարքսի անմիջական գեկավարության տակ, և վորպես Յերկրորդ ինտերնացիոնալի միջազգային ավանդություններից լավագույնների ժառանգը: Առաջին ինտերնացիոնալը սոցիալիզմի համար մղվող պրոլետարական միջազգային պայքարի գաղափարային հիմքերն ե դրել: Յերրորդ ինտերնացիոնալն իր լավագույն ժամանակ հող եր պատրաստում բանվորական շարժման լայն և մասսայական տարածման համար: Յերրորդը, Կոմմունիստական ինտերնացիոնալը, շարունակելով Առաջին ինտերնացիոնալի գործը և յուրացնելով Յերկրորդ ինտերնացիոնալի աշխատանքների պտուղները, վճականորեն կարեց դեն նետեց վերջինի ոպպորտունիդմը, նրա սոցիալ-շուկինիզմը, նրա բուրժուական աղա-

վաղումը սոցիալիզմի և սկսեց իրագործել պրոլետարիատի դիկտատորության։ Դրանով իսկ Կոմմունիստական ինտերնացիոնալը շարունակում ե միջազգային բանվորական շարժման հերոսական փառապահն ավանդությունները՝ անգլիական չարտիստների և 1831 թվականի ֆրանսիական ապստամբների։ 1848 թվականի ֆրանսիական և գերմանական բանվոր-հեղափոխականների։ Պարիզի Կոմմունայի անմահ մարտիկների և նահատակների։ գերմանական, հունգարական և ֆիննական հեղափոխությունների քաջ զինվորների։ Նախկին ցարական բանակալության բանվորների՝ պրոլետարական դիկտատորացի հաղթական կրողների։ Հինական պրոլետարյունի Կանտոնի և Շանհայի հերոսների ավանդությունները։

Հենվելով բոլոր կոնտինենտների և բոլոր ժողովուրդների հեղափոխական բանվորական շարժման պատմական փորձի վրա, Կոմմունիստական ինտերնացիոնալն իր թեորիական և սլրակտիկ աշխատանքով ամբողջովին և անվերտապահորեն կանգնած ե նեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա, վոր (մարքսիզմը) իր հետագա զարգացումն և ստացել լենինիզմի մեջ, իսկ վերջինս վոչ այլ ինչ ե, բայց յեթե իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարձրչանի մարքսիզմ։

Պաշտպանելով և քարոզելով Մարքս-Ենգելսի դիվականիկական մատերիալիզմը, կիրառելով այն վորպես իրականությունը ճանաչելու հեղափոխական մեթոդ՝ այդ իրականությունը հեղափոխական վերափոխման լենթարկելու նպատակով, Կոմմունիստական ինտերնացիոնալն ակտիվ պայքար ե մղում բուրժուա-

կան աշխարհայացքի բոլոր տեսակների դեմ և թեորետիկական ու պրակտիկ ոպպորտյուններմի բոլոր տեսակների դեմ։ Կանգնած լինելով պրոլետարիատի հետեւղական դասակարգային պայքարի հողի վրա, պրոլետարիատի ժամանակավոր, մասնակի, իմբակալին, ազգային շահերը յենթարկելով նրա տեսական, ընդհանուր, միջազգային շահերին, Կոմմունիստական ինտերնացիոնալն անխնա մերկացնում և ուժորմիստների՝ բուրժուազիայից փոխ առած ուսմունքը «դասակարգային խաղաղության» մասին իր բոլոր ձեռնով։ Արտահայտելով հեղափոխական պրոլետարների կապիտալիստական սիստեմի գերեզմանափորների՝ միջազգայնորեն կաղմակերպվելու պահանջը, Կոմմունիստական ինտերնացիոնալը միակ միջազգային ուժն է, զոր պրոլետարիատի զիկտատուրան ու կոմմունիզմի ունի իբրև ծրագիր և բացահայտ հանդես ե գալիս վորպես պրոլետարիատի միջազգային հեղափոխության կազմակերպիչ։

I. ԿԱՊԻՏԱԼԻ ԶՄԻ ՀԱՄԱԴԻՎՐՀԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ,
ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ԱՆԽՈՒՄԱ-
ՓԵԼԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

1. Կապիտալիզմի շարժման ընդհանուր որենքները
և պարզունաբերական կապիտալի գարաւորանը

Ապրանքային արտադրության զարգացման հիմքը վրա գոյացած կապիտալիստական հասարակությունը բնորոշվում է կապիտալիստների և խոշոր հողատերերի դասակարգի մոնոպոլիսայով, վորը տարածվում է արտադրության կարևորագույն ու վճռական միջոցների վրա, պրոլետարների դասակարգի վարձու աշխատանքի շահագործմամբ - այն պրոլետարների, վորոնք զուրկ են արտադրության միջոցներից և հարկադրված են վաճառել իրենց բանվորական ուժը - ապրանքների այնպիսի արտադրությամբ, վորի նպատակը շահութ ստանալն է և այս ամենի հետ կապված՝ ամբողջությամբ վերցրած արտադրության պրոցեսի անպլանայնությամբ ու անարխիականությամբ: Շահագործման հարաբերությունն ու բուրժուազիայի տնտեսական տիրապետությունն իրենց քաղաքական արտայությունն են գտնում կապիտալի պետական կազմակերպության մեջ, վորպես պրոլետարիատին ճնշելու ապարատի:

Կապիտալիզմի պատմությունն ամբողջովին հաս-

տատեց Մարքսի ուսմունքը կապիտալիստական հասարակության զարգացման որենքների և այդ զարգացման հակասությունների մասին, վորոնք ամբողջ կապիտալիստական սիստեմը մղում են դեպի իր անխուսափելի կործանումը:

Շահույթի յետելից ընկած՝ բուրժուազիան հարկադրված եր ավելի ու ավելի աճող մասշտարով զարգացնել արտադրողական ուժերը, ամրապնդել և լայնացնել կապիտալիստական արտադրական հարաբերությունների տիրապետությունը: Դրանով իսկ կապիտալիզմի զարգացումը շարունակ վերարտադրում եր ընդյանած հիմքի վրա կապիտալիստական սիստեմի բոլոր ներքին հակասությունները, նախ և առաջ վճռական հակասությունը աշխատանքի հասարակական բնույթի և լուրացման մասնավոր բնույթի միջև, արտադրողական ուժերի աճման և կապիտալիզմի գույքային հարաբերությունների միջև: Մասնավոր սեփականության տիրապետությունը արտադրության միջոցների նկատմամբ, այդ արտադրության անարխիական տարերակին ընթացքը տանում եյին դեպի տնտեսական հավասարակըշուության խախտումն արտադրության զանազան ճյուղերի մեջ՝ հարակից այն հակասության զարգացման, վոր կա արտադրության անսահման ընդարձակման տեսդենցի և պրոլետարական մասսաների սահմանափակ սպառման միջև (ընդհանուր գերարտագրություն), մի հանգամանք, վորի հետեանքն են պարբերաբար կրկնվող ավերիչ կրիզիսներն ու պրոլետարիատի մասսայական գործազրկությունը: Մասնավոր սեփականության տիրապետությունը հավասարապես

իր արտահայտությունն եր գտնում մըցության մեջ՝ թե կապիտալիստական առանձին յերկրներում և թե համաշխարհակին շարունակ աճող շուկայում։ Կապիտալիստների միջև տեղի ունեցող մըցության այս վերջին ձեւն իր հետևանքն ունեցավ մի շարք պատերազմներ, վորոնք կապիտալիստական զարգացման անխուսափելի ուղեկիցներն են։

Մյուս կողմից, խոշոր արտավրության տեխնիկական և տնտեսական առավելությունները տանում ելին դեպի նախակապիտալիստական տնտեսաձեւերի հետմղումն ու քայլքայումը մըցման պայքարում և դեպի կապիտալի ավելի ու ավելի աճող կոնցենտրացիան (համակենտրոնացումը) ու կենտրոնացումը։ Արդյունաբերության բնագավառում կոնցենտրացիալի և կենտրոնացման այս որևնքը նախ և առաջ արտահայտվում և մանր արտադրության ուղղակի կործանման մեջ, իսկ մասամբ նրանով, վոր այդ արտադրությունը իջեցվում ե մինչ խոշոր ձեռնարկությունների ոժանդակ ըջիների դերի։ Հողի վերաբերմամբ գոյություն ունեցող մոնոպոլիայի և բացարձակ ունտայի պատճառով զարգացման ընդհանուր թափից անխուսափելիորեն յետ մնացած գյուղատնտեսության բնագավառում նա իր արտահայտությունն եր գտնում վոչ միայն գյուղացիության շերտավորման և նրա լայն խավերի պրոլետարացման մեջ, այլ, գլխավորապես, նրանում, վոր գյուղացիական մանր տնտեսությունը բացահայտ և թագնված ձերով յենթարկվուա եր խոշոր կապիտալի տիրապետության, ընդունին մանր տնտեսությունը կարողանում եր ոլանպանել իր չերեսութական անկախությունը միայն աշխատան-

քի ծալրահեղ լարման և սիստեմատիկ թերսպառման դնուվ։

Մերենաների աճող կիրառումը, տեխնիկալի շարունակական կատարելագործումը և—այս հիմքի վրա—կապիտալի որգանական կազմի անընդհատ բարձրացումը, վորին ուղեկցում են աշխատանքի բաժանման աճումը, նրա արտադրողականության ու ու ինտենսիվության բարձրացումը, նշանակուա ելին նյանապես կանաց և մանկական աշխատանքի ավելի ու ավելի լայն կիրառումն, պահեստի արդյունաբերական ահազին բանակների գոյացումն, վորոնք շարունակ լրացվում ելին պլուղարացման յենթարկվող և գյուղերից գուրս մղվող գյուղացիությամբ ու քաղաքաների քայլքայվող մանր և միջակ բուժութաղիազով։ Կապիտալի մագնատների խմբակի գոյացումը հասարակական հարաբերությունների մեջ բենում և պրոլետարիատի հսկայական մասնաներինը—մյուսում, բանվոր գասակարգի շահագործման նորմայի անընդհատ աճումը, ընդլայնած հիմքի վրա վերարտադրությունը կապիտալիզմի խորագույն հակառությունների և նրանց հետևանքների (կրիզիսների, պատերազմների և այլն), սոցիալական անհավասարության շարունակական աճումը, իրեն կապիտալիստական արտադրության մեխանիզմով միավորված ու մարդկան պրոլետարիատի ընդվզումների աճումը, — այս ամենը անխուսափելիորեն տանում եր դեպի կապիտալիզմի հիմքերի քայլքայումը և մոտեցնում նրա խորտակման մոմենտը։

Արա հետ միաժամանակ խորը հեղաշրջում եր կատարվում կապիտալիստական հասարակության կեն-

յալային և կուլտուրական ամբողջ կենսաձեի մեջ.—
բուրժուազիայի ռանտէն-խմբակների պարագիտացին
քայլալում, ընտանիքի քայլայում, վորն արտահայ-
տում եր աճող հակասությունը հասարակական ար-
տադրության մեջ կանաց մասսայուրին ներդրագիտու-
և ընտանեկան կենսաձեի ու տնալին կենցաղի միջն
(ինչ վոր նշանավոր չափով ժառանգություն եր նախ-
կին տնտեսական դարաշրջանների), կուլտուր-իդեո-
լոգիական կյանքի աճող մանրացումն ու այլասերու-
մը, վորոնց հիմքն և աշխատանքի կոտորակային
մասնագիտացումը, քաղաքալին զարգացման ծայրա-
հեղ ալանդակությունն ու գլուղական կյանքի սահ-
մանափակությունը, բուրժուազիայի անընդունակու-
թյունը գիտական սինթետիկ աշխարհայացք ստեղ-
ծելու չնայած ընական գիտության ահազին հաջողու-
թյուններին, իդեալիստական, միտիկական և կրոնա-
կան սնոտիապաշտությունների աճումը,—այս բոլոր
յերկութներն ազդանշանում եյին կապիտալիստական
սիստեմի պատմական վախճանի մոտեցումը:

2. Քինանսական կապիտալի գարաւեցանը (Խմբերի լիզմի)

Արդյունաբերական կապիտալիզմի շրջանը հիմ-
նականում «ազատ միության» շրջան եր, կապիտա-
լիզմի համեմատաբար սահուն զարգացման և ամբողջ
յերկրագնդովը մին տարածվելու շրջան՝ գենես ազատ
գաղութների բաժանքի ու նրանց զինված գրավման
պայմաններում, ընդունակ անընդհատ աճում եյին
կապիտալիզմի ներքին հակասությունները, վորոնց

ծանրությունն ընկնում եր զլսավորապես սիստեմա-
տիկորեն թալանվող, ճնշված ու ճզմված գաղութային
ծայրերկրների վրա:

Այդ շրջանը XX դարի սկզբում փոխարինվեց
խմբերիալիզմի շրջանով, կապիտալիզմի թոփչքներ
կատարող և կոնֆլիկտներով լի զարգացման շրջանով,
յերբ ազատ մրցությունն սկսեց արագորեն տեղի տալ
մոնոպոլիային, յերբ բոլոր մի ժամանակ «ազատ»
գաղութային յերկրները բաժանված ելին արդեն,
յերբ պայքարը գաղութների ու ազգեցության շրջան-
ների վերաբաժանման համար անխուսափելիորեն
սկսեց ընդունել, առաջին հերթին, զինված պայքարի
ձեւը:

Այսպիսով, կապիտալիզմի հակասություններն
իրենց ամբողջ ծավալով ու իրոք համաշխարհայիշու-
մասշտաբով իրենց ամենավառ արտահայտությունն
ստացան խմբերիալիզմի (Փինանսական կապիտալիզմի)
դրաւացնում, վորը (իմպերիալիզմը) հանդիսանում
ե իրեն կապիտալիզմի պատմականորեն նոր ձեւը, նոր
հարաբերություն համաշխարհային կապիտալիստական
տնտեսության տարբեր մասերի միջն և կերպարանա-
փոխված հարաբերություն կապիտալիստական հանա-
րակության հիմնական գասակարգերի միջն:

Պատմական այս նոր շրջանը ծագեց կապիտա-
լիստական հասարակության շարժման կարևորագույն
որենքների հիմունքի վրա: Նա աճեց արդյունաբերական
կապիտալիզմի զարգացումից, վորպես կապիտալիզմի
պատմական շարունակությունը: Նա սրեց կապիտալիզ-
մի շարժման բոլոր հիմնական տեսնդենցների և որենք-
ների, նրա բոլոր հիմնական հակասությունների և հա-

կամարտությունների արտահայտությունը: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման որենքը հասցըրեց հզոր մոնոպոլիստական միավորումների (կարտելներ, սինդիկատներ, տրեստներ) կազմավորմանը, հսկայական համակցված ձեռնարկությունների նոր ձեին, վորոնք բանկերի միջոցով շաղկապված են մի հանգույցի մեջ: Արդյունաբերական կապիտալի միակցումը բանկայինին, խոշոր հողատիրության ներկրավումը կապիտալիստական կազմակերպությունների ընդհանուր սիստեմի մեջ և կապիտալիզմի այդ ձեի մոնոպոլիստական ընույթը արդյունաբերական կապիտալի գարաջրջանը դարձրին ֆինանսական կապիտալի գարաջրջան: Արդյունաբերական կապիտալիզմի «ազատ մրցությունը», վոր բանեց ֆեոդուական մոնոպոլիայի և առեւրական կապիտալի մոնոպոլիայի տեղը, ինքը գարձավ Ֆինանսական կապիտալի մոնոպոլիա: Միևնույն ժամանակ՝ առաջանալով աղատ մրցությունից, կապիտալիստական մոնոպոլիաները չեն կերպացնում նրան, այլ գոյություն ունեն նրա վերելք և նրա կողքին, դրանով իսկ ծնելով մի շարք առանձնապես սուր ու խոշոր հակասություններ, շը փումներ և կոնֆլիկտներ:

Բարդ մեքենաների, քիմիական պրոցեսների, ելեկտրական եներգիայի աճող կիրառումը, այդ հիմքի վրա կապիտալի որգանական կազմի բարձրացումը և շահույթի նորմայի այստեղից բղխող անկումը, վոր ժամանակավորապես ջլատվում ե միայն խոշորագույն մոնոպոլ միավորումների վերաբերմամբ՝ շնորհիվ կարտելային բարձր գների քաղաքականության, առաջացնում են նոր հետամտումն գա-

դութալին գերշահույթի և պայքար աշխարհի նոր վերաբաժանման համար: Ստանդարտիզացիայի յենթարկած մասսայական արտադրությունը պահանջում է վաճառահանուան նոր արտաքին շուկաներ: Հումուզի և վառելիքի աճող պահանջն առաջացնում է ուժեղացրած հետամտումն նրանց աղբյուրների: Վերջապես բարձր պրոտեկցիոնիզմի սիստեմը, վոր արգելք և հանդիսանում ապրանքների արտահանման և լրացուցիչ շահույթ ապահովում արտահանված կապիտալի համար, լրացուցիչ ստիմուլներ և ստեղծում կապիտալի եքսպորտի համար: Ուստի կապիտալի եքսպորտը տնտեսական կապի վճռական և սպեցիֆիկ ձեն և դաւնում համաշխարհային կապիտալիստական եկոնոմիկայի զանազան մասերի միջև: Արա արդյունքն այն ե, վոր մոնոպոլակրությունը վաճառահանման գաղութային շուկաների, հումուզիթի աղբյուրների և կապիտալի կիրառման շրջանների վերաբերմամբ ծայրահեղորեն ուժեղացնում է կապիտալիստական զարգացման ընդհանուր անհամաշափությունը և սրում կոնֆլիկտները ֆինանսական կապիտալի «մեծ պետությունների» միջև գաղութների և աղքեցության շը ջանների վերաբաժանման համար:

Այսպիսով համաշխարհային տնտեսության արտադրողական ուժերի աճումը տանում է դեպի տընտեսական կյանքի հետագա միջազգայնացումը և միենույն ժամանակ դեպի պայքարը աշխարհի նոր վերաբաժանման համար, այն աշխարհի, վորն արդեն բաժանված ե գինանսական կապիտալի խոշորագույն պետությունների միջև, գեպի այդ պայքարի ձեերի փոփոխումն ու սրումն, դեպի հժան գների մեթոդի փոխարինումը

ավելի ու ավելի չափով ուժալին ճնշման՝ մեթոդներով (բոյկոս, բարձր պրոտեկցիոնիզմ, մաքսալին, պատերազմներ, պատերազմներ բառիս ըուն իմաստով և այլն):

Հետեապես, կապիտալիզմի մոնոպոլիստական ձևին ուղեկցում են անխուսափելի իմպերիալիստական պատերազմները, վորոնք իրենց ընդզրկումով և իրենց տեխնիկալի կործանարար ուժով նմանը չունեն համաշխարհալին պատմության մեջ:

Յ. Խմաբերիալիզմի ուժերը յեզ հեղա- փոխության ուժերը

Կապիտալիզմի իմպերիալիստական ձևը, տիրապետող դասակարգի գանացան ֆրակցիաների համախմբման տեսնկնցն արտահայտելով, պրոլետարիատի լայն մասսաները հակադրում են վոչ թե առանձին ձեռնարկատիրոջ, այլ աճող չափով ամբողջությամբ վերցրած կապիտալիստների ամբողջ դասակարգին ու նրա պետական իշխանությանը: Մյուս կողմից, կապիտալիզմի այդ ձեւը պայմանավոր է ազգային պետության նեղացած անջրապետները և ընդլայնում տիրապետող մեծապետական ազգի պետական կապիտալիստական իշխանության շրջանակները, այդ իշխանությանը հակադրելով ազգայնորեն ճնշված ժողովուրդների միջինավոր մասսաներին թե այսպես կոչված փոքր ազգերի մեջ և թե դադութներում: Վերջապես, կապիտալիզմի այդ ձևն ամենասուր կերպով հակադրում է միմյանց իմպերիալիստական պետությունները: Իրերի այս դրության պարագայում բուրժուազիայի համար առանձին նշանակություն և ստանում

պետական իշխանությունը, վոր դառնում ե ֆինանսական-կապիտալիստական ոլիգոպերիալի գիկտատուրան, նրա համակենտրոնացած հզորության արտահայտությունը: Այդ բազմազգի իմպերիալիստական պետության փունկցիաները ծավալվում են բոլոր ուղղություններով: Զարգացումն պետական-կապիտալիստական ձևերի, վորոնք հեշտացնում են թե պայքարը արտաքին շուկայում (տնտեսության ուազմական մոբիլիզացիա) և թե պայքարն ընդդեմ բանվոր դասակարգի, —միլիտարիզմի բացառիկ հրեշտակոր աճումը (զորաբանակ, ծովալին և ոգային տորմիզը, քիմիայի և բակտերիոլոգիայի կիրառումը), իմպերիալիստական պետության աճող ճնշումը բանվոր դասակարգի նկատմամբ (շահագործման աճումն և ուղղակի ճնշումը մի կողմից, բարուկրատական ոեփորմիստական վերնաշերտի կաշառման սիստեմատիկ քաղաքականությունը մյուս կողմից), —այս ամենն արտահայտում է պետական իշխանության տեսակարար կշռի ահազին աճումը: Այս պարմաններում պրոլետարիատի յուրաքանչյուր փոքր իշշատե խոշոր յելույթը դառնում է յելույթը ընդդեմ պետական իշխանության, այսինքն քաղաքական յելույթը:

Այսպես, ուրեմն, կապիտալիզմի զարգացումը, և մանավանդ այդ զարգացման իմպերիալիստական դարաշրջանը, վերարտադրում ե կապիտալիզմի հիմնական հակասություններն ավելի ու ավելի վեթխարի մասշտաբով: Մրցությունը մանր կապիտալիստաների միջև դադարում ե սիայն նրա համար, վորպեսզի փոխարինվի խոշորների մրցությամբ: այնտեղ ուր հանդարտում ե խոշորների մրցությունը, նա բորբոք-

վում ե կապիտալի մագնատների հսկայական միությունների և նրանց պետությունների միջե, — տեղական և ազգային կրիզիսները դառնում են կրիզիսներ, վորոնք ընդգրկում են միշարք յերկրներ, իսկ այնուհետև դառնում են համաշխարհային կրիզիսներ. տեղական բնույթ կրող պատերազմներին փոխարինում են կոռալիցիաների պատերազմները և համաշխարհային պատերազմները դասակարգային պայքարն առանձին բանվորական խմբերի մեկուսացած յելույթներից փոխակերպվում ե համաշխարհային պրոլետարիատի ազգային, իսկ այնուհետև միջազգային պայքարի՝ ընդդեմ համաշխարհային բուրժուազիայի: Վերջապես, ֆինանսական կապիտալի հզորակես կազմակերպված ուժերի գեմ կազմակերպվում են յերկու գլխավոր հեղափոխական ուժեր՝ մի կողմից կապիտալիստական պետությունների բանվորները, մյուս կողմից ոտարերկրյա կապիտալի լծի տակ ճգմված՝ գաղութների ծոլովդական մասսաները, վորոնք ընթանում են միջազգային հեղափոխական պրոլետարական շարժման ղեկավարությամբ և հեգեմոնիայի տակ:

Սակայն այս հիմնական հեղափոխական տեսնունցը ժամանակավորապես ջլատվում է յելուապական, հյուսիս-ամերիկական և յապոնական պրոլետարիատի վորոշ մասերի կաշառումով իմպերիալիստական բուրժուազիայի կողմից և մասսաների հեղափոխական շարժումից վախեցած ազգային բուրժուազիայի դավաճանությամբ կիսագաղութային և գաղութային յերկըրներում: Լրացուցիչ գերշահույթ ստանալով, թե չնորդիվ առնասարակ համաշխարհային շուկայում ունեցած իր դիրքի (ավելի զարգացած տեխնիկա, կապիտալի

եքսպորտ շահույթի ավելի բարձր նորմա ունեցող յերկրները և այն) և թե գաղութների ու կիսազաղութների թալանից, իմպերիալիստական պետությունների բուրժուազիան այդ գերշահույթների հաշվին բարձրացնում եր «իր» բանվորների մի մասի աշխատավարձը, այդպիսով շահագրգուելով նրանց «հայրենական» կապիտալիզմի զարգացման գործում, գաղութային թալանի գործում և հավատարմության մեջ հանդեպ իմպերիալիստական պետության: Այդ սխառեմատիկ կաշառումը զործադրվում էր և զործադրվում ե առանձնապես ընդարձակ կերպով ուժեղագույն իմպերիալիստական յերկրներում, իր ամենավառ արտահայտությունը գտնելով բանվորական արիտոնկրատիւալիստիայի և բանվոր գասակարգի բյուրոկրատական խավերի այի և բանվոր գասակարգի բյուրոկրատական սոցիալիստիկայի մեջ սոցիալ-դեմոկրատիայի և արհմիությունների զեկավար կազմերի, վորոնք հանգիստանում են բուրժուական ազգեցության ըոնք հանգիստիչները պրոլետարիատին և կապիտառողական կարգի լավագույն նեցուկը:

Բայց, կանքի կոչելով բանվոր գասակարգի կաշառվող վերնաշերտի աճումը, իմպերիալիզմը վերջիշտավոր կործանում է նրա ազգեցությունը բանվոր գասակարգի վերաբերմամբ, վոր չափով վոր իմպերիալիզմի հակասությունների խորացումը, բանվորական լիզմի մասսաների զբության վատթարացումը և պրոլետարիատի մասսայական գործազրկությունը, պատերազմական կոնֆլիկտների ծանր հետևանքները, միքանի պետությունների մենաշնորհյալ դիրքերի կորուստը համաշխարհային շուկայում, գաղութների անցումն այդ

տությունների և այլն, փոր փորումեն սոցիալ-իմպերիալիզմի հիմքը մասսաների մեջ։ Հավասարապես բուժուազիայի տարրեր խավերի սիստեմատիկ կաշառումը գաղութներում ու կիսազաղութներում, նրա դաշվաճանությունը ազգային-հեղափոխական շարժմանը և նրա մերձեցումը՝ իմպերիալիստական պետություններին միայն ժամանակավորապես են ջլատում հեղափոխական կրիզիսի զարգացումը։ Վերջին հաշվով դա տառում եղեպի իմպերիալիստական ճնշման ուժեղացումը, դեպի ժողովրդական մասսաների նկատմամբ ազգային բութուազիայի ունեցած ազգեցության անկումը, դեպի հեղափոխական կրիզիսի սրումն, դեպի գյուղացիության ամենալայն մասսաների ազրարային հեղափոխության բորբոքումն ու դեպի զաղութային և կախալյերկների պրոլետարատի հեգեմոնիայի պայմանների ստեղծումն ժողովրդական մասսաների անկախության և լիակատար ազգային ազատագրության համար մղվող պատքարում։

4. Իմպերիալիզմը յեզ կապիտալիզմի խորեակումը

Իմպերիալիզմը վերին աստիճանի զարգացրել է համաշխարհային կապիտալիզմի արտադրողական ուժերը։ Նա ավարտել ե հասարակության սոցիալիստական կազմակերպության բոլոր նյութական նախադրյաների պատրաստումը։ Իր պատերազմներով նա ցույց է տալիս, փոր իմպերիալիստական պետությունների սահմանափակ շրջանակներից վերաճած համաշխարհային տնտեսության արտադրողական ուժերը են տնտեսության կազմակերպումն իր

համաշխարհային, միջազդային մասշտաբով։ Իմպերիալիզմը փորձ է անում լուծելու արդ հակտությունը, հրով ու սրով ճանապարհ բանալով համաշխարհային պետական-կապիտալիստական միասնական տրեստի համար, վոր կազմակերպում ե ամբողջ համաշխարհային տնտեսությունը։ Այդ արյունոտ ուտոպիան ներբողում ե սոցիալ-գեմոկրատական իդեոլոգների կողմից վորպես «կազմակերպված» նոր կապիտալիզմի խաղաղ մեթոդ։ Իրականության մեջ այդ ուտոպիան իր ճանապարհին հանդիպում ե այնպիսի մասշտաբի անհաղթելի որչեկտիվ խոչընդոտների, վոր կապիտալիզմն անխուսափելիորեն պետք ե ընկնի իր սեփական հակասությունների ծանրության տակ։ Կապիտալիզմի անհամաչափ զարգացման որենքը, վոր սրվում ե իմպերիալիստական գարաշը անում, անհնարին և դարձընում իմպերիալիստական պետությունների տեսական հաստատուն միջազդային համախմբումները։ Մյուս կողմից, մի շարք իմպերիալիստական պատերազմներ, վորոնք համաշխարհային պատերազմներ են դառնում, վորոնց միջոցով կապիտալի կենտրոնացման որենքը ձգտում ե հասնել իր համաշխարհային սահմանին—միասնական համաշխարհային տրեստին—այնպիսի ավելմունքներ են բերում, այնպիսի ծանրություններ են բարդում բանվոր դասակարգի և միլիոնավոր գաղութային պլոտետարների ու գյուղացիների ուսերին, վոր կապիտալիզմը պետք ե շատ ավելի վաղանիսուսափելիորեն կործանվի պրոլետարական հեղափոխության հարվածների տակ։

Բարձրագույն փուլը լինելով կապիտալիզմի զարգացման, ահագին չափերի հասցնելով համաշխարհա-

յին անտեսության արտադրողական ուժելը, ըստ իր պատկերի ու նմանության վերաշինելով ամբողջ աշխարհը, իմպերիալիզմը ֆինանսական կապիտալիստական շահագործման ըրչագծի մեջ և քաշում բոլոր գաղութները, բոլոր ցեղերը և բոլոր ժողովուրդները: Բայց միևնույն ժամանակ կապիտալի մոնոպոլիսական ձեռնածող չափով զարգացնում և կապիտալիզմի պարագատային վերաբերման, փոման, անկման տարրերը: Վորոշ չափով վոչչացնելով մրցության շարժիչ ուժը, կարտելային գների քաղաքականություն վարելով, անսահմանափակ կերպով տնօրինելով շուկալի վիճակը, մղնոպոլ կապիտալը տեսնենց ունի կասեցնելու արտագրողական ուժերի հետագա զարգացումը: Գերշահութիւն ահազին գումարներ քամելով սիլիոնավոր գաղութային բանվորներից ու գյուղացիներից, հսկայական յեկամուտներ կուտակելով այդ շահագործումից, իմպերիալիզմն ստեղծում և փառող և պարագիտորեն վերասերվող ռանտյե-պետությունների տիպը և կուպոններ խուզելով ապրող մակարույժների ամբողջ խավեր: Ալարտելով սոցիալիզմի նյութական նախադրյալների ստեղծման ոլորցեսաը (արտադրության միջոցների կոնցենտրացիա, աշխատանքի վիթխարի հանրայնացում, բանվորական կազմակերպությունների աճում), իմպերիալիստական գարաշը արում և հակասությունները «մեծ պետությունների» միջին և ծնունդ տալիս պատերազմների, վորոնք տանում են դեպի միասնական համաշխարհային տնտեսության քայլքայումը: Ուստի իմպերիալիզմը փուղ յել մահացող կապիտալիզմն ե: Նա առնասարակ կապիտալիզմի զարգացման վերջին ետապն եւ նա նաև չափավարհային սոցիալիստական հեղափոխուրյան նախորյակն ե:

Այսպիսով, միջազգային պրոլետարական հեղափությունը բղիում ե առհասարակ կապիտալիզմի վարդացման պայմաններից, առանձնապես նրա իմպերիալիստական վիճակը: Կապիտալիստական սիստեմները ամբողջությամբ գնում ե դեպի իր վերջնական իր ամբողջությամբ գնում ե դեպի իր վերջնական անկումը: Ֆինանսական կապիտալի դիկտատուրան կործանվում է, տեղի տալով պրոլետարիատի դիկտատուրային:

սաստանում: 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը տապալեց խոշոր-կալվածատիրական ինքնակալության տիրապետությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը տապալեց բուրժուազիակի տիրապետությունը: Այդ հաղթական պրոլետարական հեղափոխությունը եքսպրոպրիացիակեց յենթարկեց եքսպրոպրիատորներին, բուրժուազիակեց և կալվածատերերից խեց արտադրության միջոցները, մարդկակին պատմության մեջ առաջին անգամ ստեղծեց և ամբապնդեց պրոլետարիատի գիտական ահազին լելկում, կյանքում մարմնացրեց պետության նոր, խորհրդային տիպ և սկիզբ դրեց պրոլետարիատի միջազգային նեղափակության:

Համաշխարհային ամբողջ կապիտալիզմի հզոր ցնցման, դասակարգային պայքարի սրման հիմքի վրա և պլոյնտարիատի Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազգեցության տակ տեղի ունեցան մի շարք հեղափոխություններ և հեղափոխական յելույթներ թե Յելվոպայի մայր ցամաքում, թե գաղութային ու կիսազաղութային լելկում 1918 թվականի հունվարին—բանվորական հեղափոխությունը Ֆինլանդիայում. 1918 թվ. ոգոստոսին—այսպես կոչված «բննձալին ապստամբությունները» Յապոնիայում. 1918 թվ. նոյեմբերին—Ավստրիայի և Գերմանիայի հեղափոխությունները, վորոնք տապալեցին կիսաֆեոլալական միապետությունների ռեժիմը. 1919 թվ. մարտին—պրոլետարական հեղափոխությունը Հունգարիայում և ապստամբությունը Կորեայում. 1919 թվ. ապրիլին—խորհրդային իշխանություն Բավարիայում. 1920 թվ. հունվարին—ազգակին-բուր-

II. ԿԱՐԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻԶԻՍԻ ՅԵՎ ՀԱՄԱՇԱՐԼԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

I. Համաշխարհային պատերազմը յեվ հեղափոխական կրիզիսի բնօացքը

Իմպերիալիստական պայքարը կապիտալի խոշորագույն պետությունների միջև աշխարհի նոր վերաբաժնման համար հասցրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին (1914—1918թ. թ.): Այդ պատերազմը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի ամբողջ սիստեմը և սկիզբ դրեց նրա ընդհանուր կրիզիսի շրջանին: Նա իրեն է սպաս դրեց պատերազմող լերկրների ամբողջ ժողովրդատնտեսությունը, ստեղծելով պետական կապիտալիզմի զրահավոր բոունցքը, անարտագրողական ծախսերը հասցրեց վիթխարի չափերի, վրչնչացրեց ահազին քանակությամբ արտադրության միջոցներ և բանվորական կենդանի ուժ, ավերեց ժողովրդական լայն մասսաներին, անհամար դժվարություններ ստեղծեց ինդուստրիալ բանվորների, զյուղացիների, գաղութային ժողովրդների համար: Նա անխուսափելիորեն սրեց դասակարգային կոփվը, վորը վերաճեց և դարձավ մասսաների բացահայտ հեղափոխական յելույթներ և բալաֆացիական պատերազմ: Իմպերիալիստական ֆրոնտը պատռվեց իր ամենաթուլ ողակի մեջ—ցարական Ռու-

ժուական հեղափոխությունը Տաճկաստանում. 1920 թ. սեպտեմբերին — Փաքրիկաների զբավումը բանվորների կողմէց իտալիայում. 1921 թվ. մարտին — առաջավոր բանվորների ապստամբությունը Գերմանիայում. 1923 թվ. սեպտեմբերին — ապստամբությունը Բոլգարիայում. 1923 թվ. աշնանը — հեղափոխական կրիզիսը Գերմանիայում. 1924 թվ. դեկտեմբերին — ապստամբությունն եստոնիայում. 1925 թվի ապրիլին — ապստամբությունը Մարոկոյում. ոգոստոսին — Սիրիայում. 1926 թվ. մայիսին — ընդհանուր գործադրություն Անգլիայում. 1927 թվի հուլիսին — բանվորների ապստամբությունը Վիեննայում. Ալսուլոր փաստերը և, վերջապես, այնպիսի անցքերն, ինչպիս ապստամբությունն ինդոնեզիայում, խորը խմբումը Հնդկաստանում, չինական մեծ հեղափոխությունը, վորը ցնցեց ասիական ամբողջ մայր ցամաքը, մեկ միջազգային-հեղափոխական շղթայի ողակներ են հանդիսանում, կապիտալիզմի խորագույն ընդհանուր կրիզիսի բաղկացուցիչ մասերը: Այդ միջազգային հեղափոխական պրոցեսսն ընդգրկել ե և անմիջական պարագան պրոլետարիատի դիկտատուրայի համար, և ազգային ազատագրական պատերազմները, և գաղութային ապստամբություններն ընդդեմ իմպերիալիզմի, վորոնք անխզելիորեն շաղկապված են գլուղացիության միլիոնավոր մասսաների ազրարարին շարժման հետ: Այսպիսով, մարդկության ահազին մասսաները ներգրավված են հեղափոխական հեղեղատի մեջ: Համաշխարհային պատմությունը մտել ե իր զարգացման նոր փուլի մեջ, կապիտալիստական սիստեմի ընդհանուր տեսական կրիզիսի փուլի մեջ: Ընդսմին համաշ-

խարհալին տնտեսության միասնականությունն իր արտահայտությունն ե գտել հեղափոխության միջազգային բնույթի մեջ, իսկ նրա առանձին մասերի զարգացման անհամաշափությունը — առանձին լերկրների հեղափոխությունները տարբեր ժամանակներում կատարելու մեջ:

Կապիտալիզմի սուր կրիզիսի (1918—1921 թ. թ.) հիմքի վրա առաջացած հեղափակ հեղաշրջման առաջին փորձերը վերջացան պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակով ու ամրապնդմամբ ԽՍՀՄ ու պրոլետարիատի պարագությամբ մի ամերող շարք յերկրներում: Այդ պարագությունները նախ և առաջ արդյունքն են հանդիսանում սոցիալ-դեմոկրատական առաջնորդների և արհեստական շարժման ու փորմիստական լիդերների դաշտաճանական տակտիկայի, նմանապես և արդեմ դաշտաճանական հանգամանքի, վոր կոմմունիստների դյունքը այս հանգամանքի, վոր բանվոր զաստակարգի մեծամասնությունը, և մի շարք կարևորագույն լերկրներում առասարակ գետս գոյություն չունելին կոմմունիստական կուսակցություններ: Այդ պարտությունների հիմքի վրա, վորոնք ստեղծեցին պրոլետարիատի գաղութային ժամանակների մասսաների ուժեղացքած շահագործման հնարաւորություն, նրանց կենսական մակարդակի խիստ իջեցման հիմքի վրա բուրժուազիան հասավ կապիտալիստական հարաբերությունների մասնակի կայունացման:

2. Հեղափոխական կրիզիսը յեվ հակահեղափոխական սոցիալ-գեմոկրատիան

Միջազգային հեղափոխության ընթացքի մեջ լուղարագույն հակահեղափոխության ուժի հատուկ նը-

շանակութիւնն ստացան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և ռեֆորմիստական արհեստակյական միությունների ղեկավար կալրելը, իսկ մյուս կողմից՝ կապիտալիստական ֆաշիստական տիպի մարտական կազմակերպությունները. այդ ուժն ակտիվ կերպով պայքարեց հեղափոխության դեմ և ակտիվորեն սատարեց կապիտալիզմի մասնակի կայունացմանը:

1914—1918 թ. թ. պատերազմական կրիզիսին ուղեկցեց սոցիալ-գենոկրատական Յերկրորդ հետեւացիոնալի խայտառակ Փլուզումբը: Լիովին հակառակով Մարքունգելսի «Կոմմունիստական Մանիֆեստի» այն թեղիսին, թե կապիտալիզմի որոք պրոլետարները հայրենիք չունեն, լիովին հակասելով Շտուտգարտի և Բադելի կոնգրեսուների հակապատերազմական բանաձևերին՝ ազգային-սոցիալ-գենոկրատական կուսակցությունների լիդերները, յեղակի բացառություններով, քվեարկեցին հոգուտ պատերազմական վարկերի, վճռականորեն արտահայտվեցին հոգուտ իմպերիալիստական «հայրենիքների» (այնինքն իմպերիալիստական բուրժուազիայի պետական կազմակերպությունների) պաշտպանության և, փոխանակ կովելու իմպերիալիստական պատերազմի դեմ, դարձան նրա հավատարիմ զինվորները, պրոպագանդիստներն ու յերգիչները (սոցիալ-հայրենասիրություն, վոր վերաճում և և դառնում՝ սոցիալ-իմպերիալիզմ): Հետեւալ շրջանում սոցիալ-դեմոկրատիան սատարում եր հափշտակողական պայմանագրերին (Բրեստ, Վերսալ). նա հանդես եր գալիս վորպես ակտիվ ուժ գեներալ-ների կողմը՝ պրոլետարական ապսուամբությունների արյունոտ ճնշման ժամանակ (Նոսկե). — նա զինված

պայքար մղեց պրոլետարական առաջին հանրապետության գեմ (Խորհրդային Ռուբաստան), նա դավաճանորեն մատնում եր իշխանությունը նվաճած պրոլետարիատին (Հունգարիա). նա մտավ իմպերիալիստական Ազգերի լիգայի մեջ (Թումաս, Պոլ Բոնկուր, Վանդերվելե) նա ուղղակի իմպերիալիստական ստրկատերերի կողմն եր բանում ընդդեմ գաղութալին ստրուկների (անգլիական բանվորական կուսակցությունը). նա ակտիվ կերպով սատարում եր բանվոր դասակարգի ամենասեակցիոն դաշիճներին (Բոլգարիա, Լեհաստան). նա իր վրա յեր վերցնում իմպերիալիստական սուպմական որենքներին նախաձեռնությունը (Ֆրանսիա). նա մատնեց անգլիական պրոլետարիատի ընդհանուր մեծ գործադուլը. նա ոգնեց խեղգելու հանքային բանվորների գործադուլը. նա ոգնեց և ոգնում և խեղելու Զինանաստանն ու Հնդկաստանը (Մակոննալդի կառավարությունը). նա հանդիսանում է իմպերիալիստական Ազգերի լիգայի պրոպագանդիստը, կապիտալի մունետիկը և կազմակերպող ուժը ԽՍՀՄ-ի պրոլետարիատի դիկտատուրայի գեմ մղվող պայքարում (Կառուցկի, Հիլֆերդինգ): Սիստեմատիկորեն անցկացնելով այդ հականեղափոխական քաղաքականությունը, սոցիալ-գենոկրատիան գործում եր յերկու թեով սոցիալ-գենոկրատիայի բացահայտ հականեղափոխական, աջ թես անհրաժեշտ և բուրժուազիայի հետ բանակցություններ վարելու և անմիջական կապի համար, «Ճախթ» — բանվորների առանձնապես նուրբ խարեւության համար: «Ճախթ» սոցիալ-գեմոկրատիան, վոր պացիքի ֆիստական, իսկ յերեմն նույնիսկ հեղափոխական ֆրազի հետ և խառնմ, իսկ ինտերն. Ծբագիրը — 2

զում, իրոք հանդես և գայիս բանվորների գեմ, մասնավանդ ամենակրիտիկական մոմենտներին (անգլիական «անկախները» և Գիլխորդը դի «ձախ» առաջնորդները 1926 թվ. ընդհանուր գործադրութիւն ժամանակ, Ուսու Բառերն ու Ընկ. Վիեննայի ապստամբության ժամանակ և այլն), ուստի սոցիալ գեմոկրատական կուսակցությունների ամենից վտանգավոր ֆրակցիան և հանդիսանում: Սպասարկելով բանվոր զասակարգիչարքերում բուրժուազիայի շահերին և ամբողջովին կանգնած լինելով բուրժուազիայի հետ զասակարգային համագործակցություն ու կոռալիցիտ ստեղծելու դադարի հողի վրա, սոցիալ-գեմոկրատիան վորոշ ժամանակաշրջաններում հարկադրված և լինում անցնել սովորողիցին կուսակցության դրության և անգամ պրոլետարիատի դասակարգային շահերի պաշտպանությունը ձևացնել նրա անտեսական կովում միայն այն նպատակով, վոր դրանով բանվորության մի մասի վըստահությունը նվաճելով, ել ավելի ամոթալի կերպով դաշանի նրա տեսական շահերին, մանավանդ զասակարգային վճռական ճակատամարտերի ժամանակ:

Սոցիալ-գեմոկրատիայի հիմնական գերն այժմ կայանում և նրանում, վոր ջլատե պրոլետարիատի անհրաժեշտ, մարտական միասնականությունը իմպերիալիզմի գեմ ուղղված նրա պայքարում: Կապիտալի գեմ մղվող պրոլետարական պայքարի միասնական ճակատը պառակտելով ու քայլարի սոցիալ-գեմոկրատիան իմպերիալիզմի գլխավոր նեցուկն և հանդիսանում բանվոր դասակարգի մեջ: Բոլոր լիբանգների միջազգային սոցիալ-գեմոկրատիան, Յերսորդ Իստերնացիոնալն ու նրա արհեստական ֆիլիալ

բաժանմունքը, արհմիությունների Ամստերդամի միւտ վորությունը, այսպիսով, դարձան բուրժուական հասարակության ռեգերվը, նրա ամենից հավատարիմ հենարանը:

Յագիտալիզմի կրիզիսը լեզ Քաջիզմը

Սոցիալ-գեմոկրատիայի կողքին, վորի ոգնությամբ բուրժուազիան ճնշում և բանվորներին կամ քննչում՝ նրանց դասակարգային աշալը չությունը, հանդես և զալիս ֆաջիմի:

Իմպերիալիզմի դարաշրջանը, դասակարգային կովի սրումն ու քաղաքացիական պատերազմի տարրերի աճումը՝ մասնավանդ համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո՝ սնանկացման հացը պարլամենտարիզմը:

Սրանից առաջացան կառավարման «նոր» մեթոդներ ու ձեւեր (որինակ, փոքր կարինետների սիստեմը, անդրկուլիսյան ոլիգոպրիմիական խմբակների ստեղծումն, «ժողովրդական ներկայացուցության» դերի անկումն ու կենցումը, «գեմոկրատական ազատությունների» կրամառումն ու վոչչացումը և այլն):

Բուրժուական-իմպերիալիստական ռեակցիայի առաջնապացման այդ պրոցեսը պատմական առանձնահատուկ պայմանների պարագայում ստանում և Փաշիզմի ձեւ: Այդպիսի պայմաններ հանդիսանում են՝ կապիտալիստական հարաբերությունների անկայությունը, սոցիալիստական ապարատակարգայնացած բազմաթիվ տարրերի առկայությունը, քաղաքային մանր բուրժուազիայի և ինտելիգենցիայի լայն խավերի աղքատացումը, դյուղական մանր բուրժուազիայի

գդգոհությունը, վերջապես, պրոլետարիատի մասսա-
յական յելույթների շարունակական սպառնալիքը:
Վորպեսզի իր համար ապահովե իշխանության ավելի
մեծ կայունությունը, նրա ամբողջունն ու մնայու-
նությունը, բուրժուազիան ավելի ու ավելի հարկա-
դրվում և պարլամենտական սիստեմից անցնելու
միջուսակցական հարաբերություններից ու կոմբե-
նացիաներից անկախ ֆաշիստական մեթոդիւ: Այդ
մեթոդը մեթոդն և անմիջական դիկտատուրայի,
վոր իրեղուգիապես քողարկվում և «համազգային
գաղափարով» և «արհեստների» (իսկ ըստ ելության
տիրապետող գասակարգերի զանազան խմբերի) ներ-
կայացու ցչությամբ, մեթոդը՝ ոգտագործելու ճանր
բուրժուական, ինտելլիգենտական և այլ մասսաների
դժգոհությունը լուրորինակ սոցիալական դեմագո-
գիայի միջոցով (անտիսեմիտիզմ, մասնակի հարձակում-
ներ վաշխառտական կապիտալի դեմ, վրդովմունք պար-
լամենտական «խոսարանից») և իշխանության կաշառա-
սիրության սիմտեմի օգնությամբ, վոր արտահայտվում
է ֆաշիստական գուգազների, կուսակցական ապահ-
ուատի և աստիճանավորության միախոնված և վարձա-
րավոզ հիերարխիայի ստեղծման մեջ ընդունի ֆաշիզմը
ձգտում և թափանցել բանվորական շրջանի մեջ ևս,
հազ սը սպրելով բանվորների ամենից հետաքայլ իսա-
վերը, ոգտագործելով նրանց գժգոհությունը, սոցիալ-
գեմոկրատիայի կրագորականությունը և այլն:

Ֆաշիզմի գլխավոր խնդիրն եւ բանվորական հեղափոխական ավանդաբարդի, այսինքն պըռլետարիատի կոմիտանիատական խավերի և նրանց կազմակերպման ջախջախումը: Ֆաշիզմի բնորոշ գծերն են հանդիսա-

նում սոցիալիստական դեմագոգիայի, իշխանության կաշառ սկերռության սիստեմի և ակտիվ սպիտակ տերը բորի համակցությունն ու ինպերիալիստական ծայրահեղ ազբեստիվությունը արտաքին քաղաքականության բնագավառում։ Բուրժուազիայի համար առանձնապես կրիտիկական շրջաններում ոգտագործելով հակակապիտալիստական ֆրազարանությունը, Փաշիզմը հաստատուն դիրք ստեղծելով պետական իշխանության ղեկի մոտ, ավելի ու ավելի յերեկան հանում իրեն վորպես խոշոր կապիտալի տերը բիստական դիկտատուրա, ճանապարհին կորցնելով իր հակակապիտալիստական չխնչչխկան խաղալիքները։

Համակերպվելով քաղաքական կոնյունկտուրայի փոփոխման, բուրժուազիան ոգտագործում ե ֆաշիզմի մեթոդները և սոցիալ-դեմոկրատիայի հետ կոալիցիա կնքելու մեթոդները, ընդումին ինքը սոցիալ-դեմոկրատիան կապիտալիզմի համար ամենից կրիտիկական մոմենտներին հաճախ խաղում ե ֆաշիստական գեր։ Զարգացման ընթացքում նա յերեան ե հանում ֆաշիստական տեսդենցներ, մի բան, վոր չի խանգարում նրան քաղաքական այլ կոնյունկտուրայի ժամանակ դեմ գնալ բուրժուական կառավարության վորպես ոպպոզիցիոն կուսակցություն։ Ֆաշիզմի մեթոդը և սոցիալ-դեմոկրատիայի հետ կոալիցիա կնքելու մեթոդը, լինելով արտասովոր մեթոդներ հնորմալը կապիտալիզմի համար և կապիտալիստական ընդհանուր կրիպիսի հատկանիշները հանդիսանալով, ոգտագործվում են բուրժուազիայի կողմից դանդաղեցնելու համար հեղափոխության առաջխաղաց ընթացքը։

Գ. Կապիտալիստական կայունացման հակառակութեանը յեզ կապիտալիզմի և եղափոխական անկման անխօնասփելիությունը

Հետպատերագմբուն ամբողջ պատմական շրջանի վորձն ապացուցում է, վոր բանվոր դասակարգի վերաբերմամբ գործադրված դաժան միջոցներով ունըա կենսական մակարդակի վրա կատարած սիստեմատիկ ճնշումով կապիտալիզմի ստարիլիզացիան չի կարող չլինել մտսնակի, ժամանակավոր, փառած:

Սակայն տեխնիկալի թուչքակերպ և տեխնդային զարգացումը, վոր միքանի յերկրներում զբաթեհասնում և տեխնիկական նոր հեղաշրջման աստիճանի, կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման արագացմած պրոցեսը, վիթխարի տրեստների «ազգալին» և միջազգային մոնոպոլիաների ստեղծումը, տրեստների և պետական իշխանության միակցումը, համաշխարհային կապիտալիստական տնտեսության աճումը չեն կարող հաղթահարել կապիտալիստական սիստեմի ընդհանուր կրիզիսը: Համաշխարհային տընտեսության պառակտումը կապիտալիստական և սոցիալիստական հատվածների, շուկաների նեղացումը, հակարմագերիալիստական շարժումը զաղություներում ծայրահեղորեն սրում են նոր, հետպատերագմյան հիմքի վրա զարգացող կապիտալիզմի բոլոր հակառակությունները: Ինքը տեխնիկական պրոցեսն ու արդյունաբերության ուացիոնալիզացիան, վորոնց մյուս կողմը մի շարք ձեռնարկությունների փակումն եւ լիկվիդացիան, արտադրանքի տահմանափակումը, բանվորական ուժի անխնա և գիշատիչ շահագործումը

հասցնում են առաջներում չտեսնված, իրոնիկական անագին գործազրկության: Փաստ եւ դառնությոր դասակարգի զրության բացարձակ վատթարացումը նույնիսկ մի շարք զարգացած կապիտալիստական յերկըրներում: Իմակրիալիստական յերկրների սիջն գոյություն ունեցող մրցության աճումը և պատերազմի մըշտական սպառնալիքը, դասակարգային կոնֆլիկտների աճող լարվածությունը նախաղրյալներ են ստեղծում կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի և համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման նոր, եւ ավելի բարձր աստիճանի համար:

Իմակրիալիստական պատերազմների առաջին շրջանի (1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմը) և Ռուսաստանի ցարի նախկին կայսրության մեջ բանվոր դասակարգի տարած Հոկտեմբերյան հաղթության հետեւնքով համաշխարհային տնտեսությունը պառակտվեց յերկու սկզբունքորեն թշնամական բանակի՝ իմալերիալիստական պետորյանների բանակ յել ԽՍՀՄ պրոլետարիատի դիկտատուրա:

Դասակարգային կառուցվածքների տարբերությունը, իշխանության դասակարգային բնության տըրբերությունը, սկզբունքային տարբերությունը ներքին ու արտաքին, տնտեսական ու կուլտուրական բաղաքականության նպատակների մեջ, ամբողջ դարգացման սկզբունքորեն տարբեր ուղղությունը խիստ բաղխում են առաջացնում կապիտալիստական աշխարհի և հաղթական պրոլետարիատի պետության միջև:

Մի ժամանակ միասնական համաշխարհային տնտեսության շրջանակներում պայքարում են յերկու

հակամարտ սիստեմներ՝ կապիտալիզմի սիստեմը և սոցիալիզմի սիստեմը:

Դասակարգավայրին կռիվը, վոր մինչև այժմ մղվում եր ախարիսի ձևերով, յերբ պրոլետարիատը չուներ իր պետական իշխանությունը, ներկայումս վերարտադրվում ե աճագին, իրոք համաշխարհային մասշտաբով, ընդումին համաշխարհային բանվոր գասակարգն ունի արդեն իր պետությունը, միջազգային պրոլետարիատի միակ հալլենիքը:

Խորհրդավայրն Միության գոյությունը նրա համաշխարհային ազգեցությամբ աշխատավոր և ճնշված մասսաների վրա ինքնին ամենից վառ արտահայտությունն ե համաշխարհային կապիտալիստական սիստեմի խստագույն կրիզիսի և գասակարգավայրին կովի պատմության մեջ դեռևս չեղած ընդլայնման ու սըրման:

Անզոր լինելով հաղթահարել իր ներքին հակասությունները, կապիտալիստական աշխարհը փորձ ե անում ստեղծելու միջազգային միավորումներ (Ազգերի Լիգա) մի գլխավոր նպատակով՝ կանգնեցնել հեղափոխական կրիզիսի անզուսպ աճումը, բլոկադայով կամ պատերազմով խեղդել պրոլետարական հանրապետությունների Միությունը: Միաժամանակ ԽՍՀՄ շուրջն են միախոնվում հեղափոխական պրոլետարիատի և գաղութային ճնշված մասսաների բոլոր ուժերը՝ կապիտալի անհաստատ, ներսից քայլավող, բայց մինչև ատամները զի՞նված համաշխարհային կոալիցիային հակաղղված և աշխատանքի միասնական համաշխարհային կոալիցիան: Այսպիսով իմաստերի պատերազմների առաջին շրջանի

հետևանքով ծագեց համաշխարհային պատմական մասշտաբի ու նշանակության նոր սկզբունքային հակասություն՝ հակասություն ԽՍՀՄ յել կապիտալիստական աշխարհի միջեվ: Մյուս կողմից, սրվեցին նաև հակամարտությունները համաշխարհային տնտեսական կան կենտրոնի տեղափոխությունը Ամերիկայի Միացյալ Նահանգները, «գոլլարի հանրապետության»՝ համաշխարհային հարստահարիչ գառնալը սրեցին հարաբերությունները Միացյալ Նահանգների և յեկարպական կապիտալիզմի, առաջին հերթին Մեծ Բրիտանիայի կապիտալիզմի միջև: Իմաստերիալիստական հին պահպանողական յերկրներից ամենազորի, Մեծ Բրիտանիայի և իր համար արդեն համաշխարհային հեգեմոնիա նվաճած՝ յերիտասարդ իմաստերիալիզմի խոռոշագույն յերկրի, Միացյալ Նահանգների կոնֆլիկտը դառնում և ֆինանսական կապիտալի պետությունների միջև տեղի ունեցող համաշխարհային կոնֆլիկտի առանցքը: Վերսալի հաշտության հետևանքով թալանված Գերմանիան, վոր տնտեսապես ապաքինվել և վերստին բռնել և իմաստերիալիստական քաղաքականության ուղին, նորից հանդես ե գալիս, վորպես լուրջ մրցակից համաշխարհային շուկայում: Խաղաղ ովկիանոսում ստեղծվում և հակասությունների հանդրւց, վորոնց զիլսավոր հիմքը կազմում և ամերիկական-յապոնական կոնֆլիկտը: Այս հիմնական հակամարտությունների կողքին զարգանում են շահերի հակասությունները պետությունների փոփովով և անկայուն խմբավորումների միջև, ընդումին յերկրորդական պետություններն ոժանդակ գործիքնե-

բի դեր են խաղում իմպերիալիստական հսկաների և նրանց կոալիցիաների ձեռքին:

Համաշխարհային կապիտալիզմի արդյունարերական ապագարատի արտադրական ունակության աճումը՝ պատերազմի հետևանքով Յեվրոպայում նեղացած ներքին շուկաների պարագայում, զուտ կապիտալիստական շրջանառությունից Խորհրդային Միության դուրս գալուց հետո, հումուկթային և վառելիքային կարևորագույն աղբյուրների ծագրահեղ մոնոպոլիզմի պայմանական աղբյուրներում ունի այն հետևանքը, վորկապիտալիստական պետությունների կոնֆլիկտները ծագալիլում են. «Խաղաղ» պատքարը նավթի, կառչուկի, բամբակի, ածուխի, մետաղի համար, շուկաների, կապիտալների ներդրման շրջանների նոր վերաբաժնման համար անխուսափելիորեն տանում եղեղի համաշխարհային նոր պատերազմ, վորն այնքան ավերիչ կլինի, վորքան մեծ են կատաղի կերպով զարգացող ռազմական տեխնիկայի հաջողությունները:

Միաժամանակ աճում են հակասությունները մետրոպլիաների յել գաղրուրային ու կիսազարդուրային յերկրների միջև. Պատերազմի հետևանքով նկատվող լիվրոպական իմպերիալիզմի վրոշ թուլացումը, կապիտալիզմի զարգացումը գաղութներում, խորհրդային հեղափոխության ազգեցությունը, կենտրոնախույս տենդենցները ծովալին և գաղութային գլխավորագույն պետության - Մեծ Բրիտանիայի ներսում (Կանադա, Ավստրալիա, Հարավային Աֆրիկա) - հետացըրին ապստամբությունների բռնկումը գաղութներում և կիսագաղութներում. Զինական մեծ հեղափոխությունը, վոր շարժման մեջ դրեց հարյուրավոր

միլիոն չին ժողովուրդը, ահազին ճեղքվածք և նշանակում իմպերիալիզմի ամբողջ սիստեմում. Անընդհատ հեղափոխական խմբումը հարյուրավոր միլիոն հոգկական բանվորների և գյուղացիների մեջ սպառնում և խորտակել իմպերիալիզմի համաշխարհային միջնաբերդի - Մեծ Բրիտանիայի տիրապետությունը Նաև կատինական Ամերիկայի յերկրներում Միացյալ Նախանձնական հզոր իմպերիալիզմի դեմ ուղղված տենդենցնում և հյուսիսամերիկյան կապիտալի եքսպանսիան: Այսպիսով յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը իմպերիալիզմի դեմ ուղղված պաքարի մեջ ներզըավող հեղափոխական պրոցեսում գաղութներում - այն մեծամասնության, վոր յենթարկված և իմպերիալիզմի միքանի խոշորագույն «մեծ պետությունների» ֆինանսական - կապիտալիստական ոլիգարխիային - նույնպես հանդիսանում ե կապիտալիստական սիստեմի ընդհանուր խոր կրիզիսի արտահայտությունը: Բայց Յեվրոպայում ևս, վորտեղ իմպերիալիզմն իր ծանր կրնկի տակ ե դրել մի շարք փոքր աղքերի, ազգային հարցը հանդիսանում ե մի գործոն, վորը սրում ե կապիտալիզմի ներքին հակառությունները:

Վերջապես, հեղափոխական ճգնաժամն անխուսափելիորեն հասունանում ե և իմպերիալիզմի բուն կենտրոններում՝ բուրժուազիայի հարձակումը բանվոր դասակարգի վրա, նրա կենսական մակարդակի վրա, նրա կազմակերպությունների, նրա քաղաքական իրավունքների վրա, և սպիտակ տերրորի աճումը զարգացող դիմադրություն են առաջ բերում պրո-

լետարիատի լայն մասսաների կողմից և դասաւարգալին կովի սրումն բանվոր դասակարգի և տըհուտիֆիկացիալի լենթարկված կապիտալի միջեւ։ Աշխատանքի վիթխարի ճակատամարտերը կապիտալի դեմ։ մասսաների ճախացման ուժեղացող պրոցեսուը կոմմունիստական կուսակցությունների ազգեցության և հեղինակության աճումը։ բանվորական ամենալայն մասսաների համակրանքների աճումը պրոլետարական դիկատուրայի նկատմամբ, — այս ամենը պարզ նշում և հեղափոխական նոր վիրեւը հասունացումն իմպերիալիզմի կենտրոններում։

Այսպես, ուրեմն, համաշխարհային կապիտալիզմի սիստեմը, իսկ նրա հետ միասին և կապիտալիզմի մասնակի կայունացումը հյուծվում են դանազան ծայրերից՝ իմպերիալիստական պետությունների միջն յեղած հակասությունների և կոնֆլիկտների կողմից։ գաղութների՝ կովի լենող միլիոնավոր մասսաների կողմից։ մետրոպոլիաների հեղափոխական պրոլետարիատի կողմից։ վեջապես, ամբողջ համաշխարհային հեղափոխական շարժման հեգեմոնի — ԽՍՀՄ հաստատված պրոլետարական դիկտուրայի կողմից։ Միջազգային հեղափոխությունը զարգանում է։

Նրա դեմ իր ուժերն ե հավաքում իմպերիալիզմ։ Իմպերիալիզմն որակարգի մեջ և դնում եքսպեղիցիաներն ընդգեմ գաղութերի, համաշխարհային նոր պատերազմ, արշավանք ԽՍՀՄ դեմ։ Դա անխուսափելիորեն հետևանք կունենա միջազգային հեղափոխության բոլոր ուժերի արձակումն ու կապիտալիզմի անկանխինի կործանումը։

III. ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՇԻՈՆԱԼԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՀԱՄԱՅՆԱՐՁԱՑԻՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ

Վերջնական նպատակը, վորին ձգտում և կոմմունիստական ինտերնացիոնալը, համաշխարհային կապիտալիստական տնտեսության փոխարինումն և կոմմունիզմի համաճարիային սիստեմը։ Կոմմունիստական հասարակությունը, վոր նախապատրաստվում և պատմական զարգացման ամբողջ ընթացքով, միակ չելքն և հանդիսանում մարդկության համար, վորովհետեւ միայն նա յե վոչնչացնում կապիտալիստական սիստեմի հակասությունները, վորոնք սպառնում են գեղրադացիայի և կործանման յենթարկել մարդկությունը։

Կոմմունիստական կարգը վոչնչացնում և հասարակության բաժանումը դասակարգերի, այսինքն արտադրական անարխիայի վոչնչացման հետ միասին վոչնչացնում և մարդու կողմից մարդուն շահագործելու և ձնշելու բոլոր տեսակներն ու ձեերը։ Պատրասող դասակարգերի տեղը բանում են համաշխարհային միասնական աշխատանքային ընկերության անդամները։ Պատմության մեջ առաջին անգամ մարդկությունն իր սեփական ձեռքն և վերցնում իր ճակատագիրը։ Փոխանակ դասակարգերի և ժողովուրդների միջեւ տեղի ունեցող ճակատամարտերում վոչնչացնելու

մարդկային անթիվ կյանքեր և անհամար հարստություններ, մարդկությունն իր ամբողջ լեռանդն ուղղում և բնության ուժերի դեմ, իր սեփական կոլլեկտիվ հզորության դարձացման ու բարձրացման համար:

Վոչնչացնելով մասնավոր սեփականությունը արտադրության միջոցների վերաբերմամբ, նրանց հասարակական սեփականություն գարձնելով, կոմմունիզմի համաշխարհային սիստեմը համաշխարհային շուկայի և մըրցության տարերային ուժը, հասարակական արտադրության կուրը ընթացքը փոխարինում և նրա զիտակցական և պլանաչափ կազմակերպությամբ, վոր նպատակ ունի բավարարելու արագ աճող հասարակական պահանջները։ Արտադրական անարխիայի և մըրցության վոչնչացման հետ վոչնչացվում են ավերիչ կրիզիսներն ու ել ավելի ավերիչ պատերազմները։ Արտադրությական ուժերի հսկայական վատնմանը և հասարակության ջղացունց դարձացմանն այստեղ հակառը վում և նրա բոլոր նկութական միջոցների պլանաչափ անորինումը և տնտեսական անցալազին դարձացումը արտադրությական ուժերի անսահման, սահուն և արագ վերելքի հիման վրա։

Մասնավոր սեփականության վերացումն ու դասակարգերի չքացումը վոչնչացնում են մեկ մարդու շահագործումը մյուսի կողմից։ Աշխատանքը դադարում և դասակարգային թշնամու համար կատարվող գործ լինելուց՝ նա դադարում և միայն կյանքի միջոց լինելուց և դառնում կենսական ամենառաջին պահանջ՝ չքանում և աղքատությունը, չքանում են մարդկանց տնտեսական անհավասարությունը, ճընշ-

ված զասակարգերի թշնամությունը, առհասարակ նյութական կյանքի վողորմելի մակարդակը։ չքանում և մարդկանց հիերարխիան աշխատանքի բաժանման ժամանակ, իսկ դրա հետ և հակասությունը մըտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև։ վերջապես, չքանում են սեռերի սոցիալական անհավասարության բոլոր հետքերը։ Դրա հետ միասին չքանում են, և զասակարգային տիրապետության որպանները, առաջին հերթին, պետական իշխանությունը։ Դասակարգային տիրապետության մարմնացում լինելով, նա անեանում և զասակարգերի անեացման գուգահեռ։ Նրա հետ աստիճանաբար անեանում են հարկադրանքի բոլոր և ամեն տեսակի նորմաները։

Դասակարգերի չքացմանն ուղեկցում և կրթության ամեն մի մոնոպոլիայի վոչնչացումը։ Կուլտուրան դառնում և ընդհանուր սեփականություն և դասակարգային անցյալ իդեոլոգիաները տեղի չեն տալիս գիտական մատերիալիստական աշխարհայացքին։ Իրերի այսպիսի գրության պարագալում անհնարին և դառնում մարդկանց տիրապետությունը մարդկանց վերաբերմամբ, և մեծագույն դաշտ և բացվում հասարակական ընտրանքի և մարդկության մեջ գրված բոլոր ընդունակությունների ներդաշնակ զարդացման համար։

Արտադրողական ուժերի աճման առջև այստեղ չի դրվում հասարակական բնույթ կրող վորեե սահման, կոմմունիստական հասարակության մեջ գոյություն չունեն վոչ մասնավոր սեփականությունը արտադրության միջոցների վերաբերմամբ, վոչ շահույթի շահամուական հաշիվները, վոչ մասսաների արհեստա-

Դանորեն պահպանվող տգիտությունը, վոչ նրանց աղքատությունը, վոր կասեցնում և տեխնիկական պրոդրեսսը կապիտալիստական հասարակության մեջ, վոչ տնարտադրողական համարին ծախքերը: Բնության ուժերի և արտադրության բնական պայմանների ամենից նպատակահարմար ոգտագործումն աշխարհի առանձին մասերում, քաղաքի և գյուղի հակադրության վոչնչացումը, մի հակադրություն, վոր կապված և գյուղատնտեսության՝ սիստեմատիկորեն յետ մնալու և նրա տեխնիկայի ցածր մակարդակի հետ. գիտության և տեխնիկայի, հետազոտական աշխատանքի և նրա գործնական կիրառման մաքսիմալ համախմբումը ամենալայն հասարակական մասշտաբով. պլանաշափ կազմակերպումը բուն գիտական աշխատանքի. վիճակագրական հաշվառքի և պլանային տնտեսական կարգավորման ամենակատարյալ մեթոդների կիրառումն. ամբողջ սիստեմի ուժեղագույն ներքին շարժիչները՝ հասարակական արագ աճող պահանջները, — արև ամենն ապահովում է հասարակական աշխատանքի արտադրողականության մաքսիմումը և իր հերթին ազատում մարդկային յեռանգը գիտության ու արվեստի հզոր աճման համար:

Համաշխարհային կոմմունիստական հասարակության արտադրողական ուժերի գարգացումը հնարավորություն և ընձեռում մարդկային ամբողջ մասսայի բարեկեցության վերելքի և մաքսիմալ կրծատման՝ այն ժամանակի, վոր նա տալիս և նյութական արտադրություն և, հետեւապես, հնարավորություն՝ պատմության մեջ չտեսնված կուլտուրական ծաղկման համար: Այդ նոր կուլտուրան առաջին անգամ միավոր-

ված մարդկության, վորը վոչնչացրել ե բոլոր և ամեն տեսակ պետական սահմանները՝ կապիտալիզմին հակադիր, կենցվի մարդկանց պարզ ու թափանցիկ փոխարարերությունների վրա: Ուստի նա ընդմիշտ կթաղի ամեն մի միտիկա, կրոն, նախապաշտարմունքներ ու սնոտիապաշտություններ և հզոր զարկ կտա գիտական ամենահաղթ իմացության զարգացման:

Կոմմունիզմի այս բարձրագույն աստիճանին, յերբ կոմմունիստական հասարակությունն արդեն զարգացել ե իր սեփական հիմքի վրա, յերբ մարդկանց ամենակողմանի զարգացման հետ միասին ահազին չափով զարգացել են նաև հասարակական արտադրողական ուժերը, յերբ հասարակությունն արդեն դրել ե իր գրոշակի վրա՝ «Յուրաքանչյուրից ըստ իր ունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջների»—նախորդում ե վորպես նրա պահանջմանը, նրա զարգացման ցածրագույն տստիճանը, սոցիալիզմի ասինանը: Այստեղ կոմմունիստական հասարակությունը դեռևս միայն գուրս և գալիս կապիտալիստական հասարակությունից, գուրս և գալիս բոլոր տեսակետներից—տնտեսական, բարոյական, մտավոր—ծածկված այն հին հասարակության բնական նիշերով, վորի ծոցից նա ծնվում է: Սոցիալիզմի արտադրողական ուժերը դեռևս բավականաշափ զարգացած չեն, վորպեսզի ապահովեն աշխատանքի արդյունքների բաշխումն ըստ պահանջների՝ նրանք բաշխվում են ըստ աշխատանքի: Աշխատանքի բաժանումը, այսինքն աշխատանքային վորոշ ֆունկցիաների ամրացումը մարդկանց վորոշ խմբերի ձեռքին, դեռևս վերացված չե, և մասնավորապես դեռևս հիմնականում

չի վոչնչացված հակադրությունը՝ մտավոր և փեզիկական աշխատանքի միջն։ Զնայած դասակարգերի վոչնչացման, դեռևս գոյություն ունեն հասարակության դասակարգային հին բաժանման մնացորդները, հետեւ վառես և պրոլետարիատի պետական իշխանության, հարկադրանքի, իրավունքի մնացորդները։ Հետեւապես, մնում են անհավասարության վորոշ հետքեր, վորոնք գեռնես չեն անհացել։ Զի վոչնչացված և դեռևս չի վերացված ամբողջովին քաղաքի և գյուղի հակադրությունը։

Բայց հին հասարակության այդ բոլոր մնացորդները չեն պաշտպանվում և չեն ջատագովվում վոչ մի հասարակական ուժի կողմից։ Կապված լինելով արտադրողական ուժերի զարգացման վորոշ մտկարգակի հետ, նրանք չքանում են այն չափով, վոր չափով վոր կապիտալիստական կարգի կապանքներից ազատագրված մարդկությունը արագ աեմպով իրեն և յենթարկում բնության ուժերը, վերադաստիարակում ինքն իրեն կոմմունիզմի վորով և սոցիալիզմից անցնում լիակատար կոմմունիզմի։

—————

IV. ԿԱՐԻՏԱԼԻԶՄԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ ՓՈԽՎԱՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՏԱՏՈՒՐԱՆ

1. Փոխանցական ցրջանը յեվ իշխանության եվանումը պրոլետարիատի կողմից

Կապիտալիստական և կոմմունիստական հասարակությունների միջև տարածվում է մի ժամանակաշրջան, յերբ մեկը հեղափոխորեն կերպարանափոխում է և տեղի տալիս մյուսին։ Այդ շրջանին համապատասխանումէ և քաղաքական փոխանցական շրջան, վորում պետությունը չի կարող լինել վոչ այլինչ, բայց յեթե պրոլետարիատի նեղափոխական դիկտատուրա իմպերիալիզմի համաշխարհային դիկտատուրայից պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրային անցնելն ընդգըրկում և պրոլետարիատի պայքարի, նրա պարտությունների և հաղթանակների յերկարատև ժամանակաշրջանը։ Կապիտալիստական հարաբերությունների շարունակվող ընդհանուր ճգնաժամի և սոցիալիստական հեղափոխությունների հասունացման, այսինքն պրոլետարիատի կողմից բուրժուազիայի դեմ մղվող քաղաքացիական պատերազմների շրջանը։ ազգային պատերազմների և գաղութային ապստամբությունների շրջանը, վորոնք իրենց եյությամբ չլինելով հեղափոխական պրոլետարիատի սոցիալիստական շարժումներ, որյեկտիվորեն դառնում են համաշխարհային

պրոլետարական հեղափոխության բաղկացուցիչ մասը, վոր չափով վոր նրանք խախտում են իմպերիալիզմի տերապետությունը. այն շրջանը, վոր իր մեջ պարունակում ե կապիտալիստական և սոցիալիստական հասարակական-տնտեսական սիստեմների, նրանց «իաղաղ» հարաբերությունների և նրանց զինված պայքարի միաժամանակյա գոյակցությունը համաշխարհային տնտեսության ներսում. սոցիալիստական խորհրդային պետությունների միության կազմավորման շրջանը, նրանց գեմ իմպերիալիստական պետությունների կողմից մղվող պատերազմների շրջանը, զաղութային ժողովուրդների հետ նրանց կողմից ավելի ու ավելի սերտ կապ հաստատելու շրջանը և այլն:

Տնտեսական և քաղաքական զարգացման անհամաշխափությունը կապիտալիզմի անպայման որենքն ե: Այդ անհամաշխափությունն ել ավելի յի ուժեղանում և սրբում իմպերիալիզմի դարձրջանում: Այստեղից հետեւում ե, վոր պրոլետարիատի միջազգային հեղափոխությունը չի կարող դիտվել վորպես միաժամանակյա և ամենուրեք կատարվող միանվագ ակտ: Այստեղից հետեւում ե, վոր սոցիալիզմի հաղթանակն սկզբնապես հնարավոր ե սակավաթիվ կապիտալիստական յերկրներում և անզամ-առանձին վերցրած-մեկում: Բայց պրոլետարիատի յուրաքանչյուր հաղթանակն ընդլայնում և համաշխարհային հեղափոխության բաղան, հետեւապես, ել ավելի յի սրբում կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը: Կապիտալիստական սիստեմն իր ամբողջությամբ այսպիսով հասնում ե իր վերջնական փլուզմանը: Ֆինանսական կապիտալի գիկտատուրան կործանվում ե, տեղի տալով պրոլետարիատի դիկտատուրային:

Յեթե բուրժուական հեղափոխությունները միայն նշանակում ելին արդեն կազմավորված և տնտեսապես տիրապետող արտադրական հարաբերությունների կարգի քաղաքական աղատազրում և իշխանությունը շահագործողների մի դասակարգի ձեռքից տալիս ելին շահագործողների մյուս դասակարգի ձեռքը, ապա շահագործողների մյուս դասակարգի ձեռքը, ապա պրոլետարիատի հեղափոխությունը նշանակում ներխուժումների բնազավառը, շահագործող դասակարգերի եքսպլուատացիան և իշխանության անցումը մի դասակարգի, վոր իրեն նպատակ ե դնում հասարակության տնտեսական հիմքի արմատական վերակառուցումն ու մարդու կողմից մարդուն ամեն մի շահագործման վոչնչացումը: Մական, յեթե բուրժուական հեղափոխությունները միայն դարերի ընթացքում վերջ դրին Փեոդոլական ազնվականության քաղաքական տիրապետությանն ամրող աշխարհում, հաղթահարելով այդ տիրապետությունը մի շարք առանձին հեղափոխությունների ընթացքում, ապա պրոլետարիատի միջազգային հեղափոխությունը բնավ չլինելով միանվագ ակտ և ընդգրկելով ամրող գարաջրջան, այսոււամենայնիվ կարող կլինի-շնորհիվ յերկրների ավելի սերտ կապի-իր խնդիրը լուծել ավելի արագ ժամկետում: Միան պրոլետարիատի համաշխարհային լիակատար հաղթանակին և նրա համաշխարհային իշխանության հաստատմանը կհետեւ համաշխարհային սոցիալիստական տնտեսության ուժեղացրած շինարարության տեսական դարաշրջանը:

Իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից նաև պրյալ և հանդիսանում տնտեսության սոցիալիս-

տական ձերի աճման և պրոլետարիատի կուլտուրական աճման, պրոլետարիատի, վոր փոխակերպում և իր սեփական բնությունը, հասունանում, վորպես հասարակության զեկավար, կյանքի բոլոր բնագավառներում, վերամշակության այդ պրոցեսի մեջ ներգրավում մնացած դասակարգերը և դրանով խոկ հող ստեղծում առհասարակ դասակարգերի հաղթահարման համար:

Պրոլետարիատի դիկտատուրայի համար և հասարակակարգի հետագա փոխակերպման համար մղվող պայքարում կալվածատերերի բլոկի դեմ կազմակերպվում և բանվորների յել զյուղացիների միուրյունը առաջնարի գաղափարային և քաղաքական հեգեմոնիայի տակ միություն, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հիմքն և հանդիսանում: Փոխանցական շրջանն իր ամբողջությամբ բնորոշվում և շահագործողների դիմադրության անխնա ձնշմամբ, սոցիալիստական շինարարության կազմակերպմամբ, մարդկանց մասսայական վերամշակմամբ՝ սոցիալիզմի վորով, դասակարգերի առտիճանական հաղթահարմամբ: Միայն այս պատմական մեծ խնդիրների իրագործման չափով և փոխանցական շրջանի հասարակությունն սկսում վերածվել կոմմունիստական հասարակության:

Այսպիսով համաշխարհային պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում և անհրաժեշտագույն և վճռողական նախադրյալը համաշխարհային կալիտալիստական անտեսությունից սոցիալիստական տնտեսության անցնելու համար: Այդ դիկտատուրան իրացվել կարող և միայն սոցիալիզմի հաղթանակի հետևանքով առանձին յերկրներում կամ յերկրների խմբերում,

յերբ նոր կազմավորված պրոլետարական հանրատիետությունները ֆեղերատիվ կապ են հաստատում արդեն գոյություն ունեցողների հետ, յերբ այդ ֆեղերատիվ միավորումների ցանցն աճում է, իր մեջ առնելով և իմպերիալիզմի Ծից ազատագրվող գաղութները. յերբ այդպիսի հանրապետությունների ֆեղերացիան վերջիվերջո դառնում և Յերկրագնդի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետուրյաների Միուրյուն, վոր իրագործում և մարդկության միավորումը պետականորեն կազմակերպված միջազգային պրոլետարիատի հեգեմոնիայի տակ:

Ի՞նչանուրյան նվաճումը պրոլետարիատի կողմից բուրժուական պատրաստի պետական մեքենայի խաղաղ «Նվաճումը» չե պարլամենտական մեծամասնություն ձեռք բերելու միջոցով: Բուրժուազիան բռնության ու տերորի բոլոր միջոցները գործադրում և պահպանելու և ամրապնդելու համար իր գիշատողական սեփականությունն ու իր քաղաքական տիրապետությունը:

Բուրժուազիան, ինչպես և նախակին ժամանակ ֆեղալական ազնվականությունը, չի կարող իր պատմական տեղը զիջել նոր դասակարգին առանց ամենահուսակատակի պայքարի: Ուստի բուրժուազիայի բռնությունը կարող է ընկճվել միմիայն պրոլետարիատի դաժան բռնությամբ: Իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից բուրժուական իշխանության բռնի տապալումն է, կապիտալիստական պետական ապարատի (բուրժուական գորարանակի, վոստիկանության, բուրոկրատական հիերարխիայի, դատարանի, պարլամենտի և այլն) կործանումը և երա

փոխարինումը պրոլետարական իշխանության նոր որդաններով, վորոնք, նախ և առաջ, հանդիսանում են շահագործողների ձնշման գործիք:

2. Պրոլետարիատի դիկտատուրան լեզ Երա խորհրդա- յին ներք

Պրոլետարական պետական իշխանության ամենա-
նպատականարմար ձևը, ինչպես ցույց տվեց 1917 թվ.
Հոկտեմբերյան հեղափոխության և հունգարական հե-
ղափոխության փորձը, վոր անչափելի ընդլայնեց
1871 թվականի Պարիզի կոմմունայի փորձը, հանդի-
սանում ե պիտուրյան նոր տիպը, վորն սկզբունքորեն
տարբերվում ե բուրժուական պետությունից վոչ մի-
այն իր դասակարգային եյությամբ, այլ և իր ներքին
կառուցվածքով, այն ե՝ խորհրդային պիտուրյան տիպը:
Անմիջորեն աշխատավորների մասսայական ամենալայն
շարժման խորքից ծագող հենց այդ տիպն և ապահո-
վում մասսաների ամենամեծ ակտիվությունը և, հետե-
մապես, վերջնական հաղթանակի ամենամեծ յերաշ-
խիքները:

Խորհրդային պետական ձևը գեմոկրատիայի բար-
ձրագույն ձևը հանդիսանալով, այն ե՝ պրոլետարական
դեմոկրատիան, խիստ հակադիր ե բուրժուական դեմո-
կրատիային, վոր ներկայացնում ե բուրժուական դիկ-
տատուրայի դիմակավորված ձևը: Պրոլետարիատի
խորհրդային պետությունը նրա գիտատուրան և,
նրա դասակարգային մենիշխանությունը: Բուրժուական
դեմոկրատիային հակադիր՝ նա բացահայտորեն ճանա-
չում ե իր դասակարգային բնույթը, բացահայտորեն
նպատակ ե դահանությունը իր գործության մեջ:

Հանուն բնակչության ահագին մեծամասնության շա-
հերի: Նա զրկում ե քաղաքական իրավունքներից իր
դասակարգային թշնամիներին և նա կարող ե պատ-
մականորեն դասակորված առանձին պայմաններում
պրոլետարիատին տալ մի շարք ժամանակավոր առա-
վելություններ մանր բուրժուական փոշիացած գյու-
ղացիության համեմատությամբ՝ պրոլետարիատի զե-
կալար գերն ամրապնդելու նպատակով: Զինաթափե-
լով և ճնշելով իր դասակարգային հակառակորդներին,
պրոլետարական պետությունը միևնույն ժամանակայի
քաղաքական իրավունքներից զրկելու ու ազատության
վորոշ սահմանափակումը զիտում ե վորակես պայքա-
րի ժամանակավոր միջոցներ ընդդեմ շահագործողների
փորձերի՝ պաշտպանելու կամ վերականգնելու իրենց
արտօնությունները: Նա իր դրոշակի վրա գրում ե,
վոր պրոլետարիատն իր ձեռքում պահում ե իշխանու-
թյունը վոչ թե նրա հավերժացման համար, վոչ թե
իր համքարային ու նեղաբեկատակցական շահերից
յելնելով, այլ նրա համար, վորակեսի ավելի ու ավելի
միավորի գյուղական պրոլետարների ու կիսապրոլե-
տարների, նմանապես և աշխատավոր գյուղացիների
հետամնաց և փոշիացած մասսաներին, բանվորների
ամենից առաջավոր շերտերին, աստիճանաբար և և սիս-
տեմատիկորեն հաղթահարելով առհասարակ դասակար-
գային բաժանումը: Լինելով պրոլետարիատի զեկավա-
րությամբ մասսաները միավորելու ու կազմակերպե-
լու համայնապարփակ ձևը, խորհուրդները իրավես
ներգրավում են սոցիալիզմի պայքարի և շինարարու-
թյան մեջ պրոլետարների, գյուղացիների և բոլոր աշ-
խատավորների ամենալայն մասսաները, պետության

կառավարման գործի մեջ են քաշումնիանց պրակտիկան, իրենց ամբողջ աշխատանքի մեջ հենվում են բանավոր դասակարգի մասսայական կազմակերպությունների վրա, լայն դեմոկրատիա յևն իրազործում աշխատավորների ներսում, անչափ ավելի մոտ են կանգնած մասսաներին, քան իշխանության ամեն մի այլ ձև։ Պատգամավորների վերընտրության իրավունքը, նրանց յետ կանչելու իրավունքը, գործադիր և որենսդրական իշխանության միացումը, ընտրությունները վոչ թե տերրիտորիալ այլ արտադրական սկզբունքով (Փաքրիկաներից, արհեստանոցներից և այլն), — այս ամենը ապահովում երանվոր դասակարգի և նրա հեգեմոնիայի տակ գնացող աշխատավորների լայն մասսաների համար սիստեմատիկ, անընդհատ և ակտիվ մանակցություն հասարակական բոլոր գործերում — տնտեսական, ընդհանուր քաղաքական, ռազմական և կուլտուրական, — և դրանով իսկ խիստ տարբերություն դնում բուրժուական-պարլամենտական հանրապետության և պրոլետարիատի խորհրդային դիկտատուրայի միջև։

Բուրժուական դեմոկրատիան, իր՝ քաղաքացիների ձեւական հավասարությամբ որևէնքի առաջ, նյութական-տնտեսական բնագավառում հենվում եդասակարգային ճշացող անհավասարության վրա։ Լիովին անձեռնմխելի թողնելով՝ պաշտպանելով և ամրապնդելով կապիտալիստների և խոշոր հողասեփականատերերի դասակարգի մոնուպուլիան արտադրության վճռողական միջոցների վերաբերմամբ, բուրժուական դեմոկրատիան դրանով իսկ իրավական ֆիկցիա, հետևապես մասսաները խաբելու և ստրկացնելու միջոց եդարձը։

նում հարստանարվող դասակարգերի, և առաջին հերթին պրոլետարիատի համար ձեւական հավասարությունն որենքի առաջ դեմոկրատական իրավունքներն ու սպասությունները, վորոնք գործնականում յենթարկվում են սիստեմատիկ սահմանափակման։ Ուստի բուրժուազիայի քաղաքական տիրապետությունն արտահայտելով, այսպես կոչված դեմոկրատիան հանդիսանում ե կապիտալիստական գեմոկրատիա։ Շահագործող դասակարգերը զրկելով արտադրության միջոցներից և պրոլետարիատի, վորպես տիրապետող դասակարգի ձեռքի մոնուպուլիա դարձնելով արտադրության այդ միջոցները, խորհրդային պետությունը սկզբնապես ունախ և առաջ էրաշխավորում ե բանվոր դասակարգի և առհասարակ աշխատավորների իրավունքների իրագործման նյութական պայմանները, ապահովելով բանվոր դասակարգի համար տներն ու համարակական շենքերը, տպարանները, փոխադրության միջոցները և այլն։

Ընդհանուր բաղաբական իրավունքների բնագավառում այդ իրավունքներից զրկելով ժողովրդի թշնամիներին ու հարստանարիչներին, խորհրդային պետությունն առաջին անգամ մինչև վերջը վաչչացնում է քաղաքացիների անհավասարությունը, վոր շահագործողական սիստեմների որոք հիմնված ե լինում սեռի, կրօնի, ազգության խարության վրա։ Նա այս բնագավառում հաստատում ե այնպիսի հավասարություն, վոր չի կիրառված։ և վոչ մի բուրժուական յերկրում։ միևնույն ժամանակ այստեղ ևս պրոլետարիատի դիկտատուրան անշեղորեն ստեղծում ե նյութական բազիս, վորը թույլ ե տալիս գործնականում իրացնել

այդ հավասարությունը. այդպիսի բնույթ ունեն այն ձեռնարկումները, վորոնք աղատագրում են կողը, նպաստում նախկին գագութների ինդուստրիացմանը և այլն:

Այսպիսով խորհրդային դեմոկրատիան պրոլետարիան դեմոկրատիա յէ, աշխատավոր մասսաների դեմոկրատիա, դեմոկրատիա –ընդդիմ շահագործողների:

Խորհրդավին պետությունը անց է կացնում բուրժուազի լիակատար զինաթափումը և զենքի կոնցենտրացիան պրոլետարիատի ձեռքին, նա զինված պրոլետարիատի պետությունն է: Զինված ուժերի կազմակերպությունն այստեղ կառուցվում է դասակարգակին սկզբունքի հիման վրա, վորպիսի սկզբունքը համապատասխանում է պրոլետարական դիկտատուրայի ամբողջ կարգին և ապահովում ինդուստրիալ պրոլետարիատի զեկավար գերը:

Հեղափոխական դիմոկրատինի վրա հենվելով, այդ կազմակերպությունը միևնույն ժամանակ ապահովում է կարմիր բանուկի և նավատօրմի մարտիկների մըշտական ու ամենասերտ կազը աշխատավոր մասսաների հետ, նրանց մասնակցությունը յերկրի կառավարման և սոցիալիզմի շինարարությանը:

Յ. Պրոլետարիատի գիլտատուրան յեզ եխապրոպրետների եխապրոպրետացիան

Հաղթական պրոլետարիոտն ոգտվում է նվաճված իշխանությունից, վորպիս տնտեսական հեղաքրջման լծակից, հեղափոխական վերակազման լենթարկելու համար կապիտալիզմի գույքային հարաբերությունները՝ նրանց արտադրական սոցիալիստական

յեղանակի հարաբերությունների վերածելու նպատակով: Այս մեծագույն տնտեսական հեղափոխության յեղակետ հանդիսանում է կալվածատերերի և կապիտալիստների եքսպրոպրիացիան, այսինքն բուրժուազիայի մոնոպոլիսական սեփականությունը պրոլետարիան պետուրյան սեփականությունն դարձնելը:

Այս բնագավառում կոմմունիստական ինտերնացիոնալն առաջարկում է պրոլետարական դիկտատուրայի հետեւալ հիմնական ինդիրները՝

ա. Արդյունաբերություն, տանսպորտ, կապի ծառայություն

ա) Գրավումն և պրոլետարական աղքայնացում բոլոր խոշոր-արդյունաբերական ձեռնարկությունների (ֆաբրիկաների, գործարանների, հանքերի, եկեղեցակայանների), վորոնք գտնվում են մասնավոր կապիտալի ձեռքում, և բոլոր պետական ու կոմմունալ ձեռնարկությունների հանձնումը խորհուրդներին:

բ) Գրավումն և պրոլետարական աղքայնացում մասնավոր կապիտալիստական յերկաթուղային, ավտոմորիլային և ջրային տրանսպորտի, նմանապես և ոգային տրանսպորտի (առևտրական և մարդատար ոգային տորմի), միջոցների և բոլոր տեսակների տրանսպորտի միջոցների վերաբերմանը պետական ու կոմմունալ սեփականության հանձնումը խորհուրդներին:

գ) Գրավումն և պրոլետարական աղքայնացում կապի (հեռագիր, հեռախոս, ռագիս) մասնավոր-կապիտալիստական միջոցների և նրանց հանձնումը կապի պետական, մունիցիպալ և այլ ծառայության խորհուրդներին:

գ) Կազմակերպումն արդյունաբերության բանվորական կառավարման, Ստեղծումն կառավարման պետական որգանների՝ արհեստական միությունների մերձավորագույն մասնակցությամբ այդ կառավարման գործում։ Ապահովումն ֆաբրիկա-գործարանային կոմիտեների համապատասխան դերի։

ե) Արդյունաբերության աշխատանքի հարմարեցումը աշխատավորների լայն մասսաների պահանջների սպասարկման։ Վերակազմությունն արդյունաբերության այն ճյուղերի, վորոնք բավարարում ելին տիրապետող դասակարգերի սպառողական պահանջը (պերճանքի առարկաներ և այլն)։ Ուժեղացումն արդյունաբերության այն ճյուղերի, վորոնք նպաստում են գյուղատնտեսության վերելքին, գյուղացիական տնտեսության հետ զողումն ամրապնդելու, պետական տնտեսությունների վերելքն ապահովելու և առհասարակ ժողովրդական ամբողջ տնտեսության զարգացման տեմպն արագացնելու նպատակով։

Բ. Գյուղատնտեսություն

ա) Գրավումն և պրոլետարական ազգայնացում ամբողջ խոշոր հողային սեփականության քաղաքում և գյուղում (ինչպես մասնավոր սեփականության, այնպես ել. յեկեղեցական, վանքապատկան և այլն) և պետական ու մունիցիպալ հողային սեփականության, այդ թվում անտառային ֆոնդի, ընդերքի, ջրերի և այլն հանձնումը խորհուրդներին, ամբողջ հողի հետագա ազգայնացմանը։

բ) Գրավումն խոշոր կալվածների արտադրական ամբողջ գույքի, այն եւ շինությունների, մեքենա-

կան սարքավորման ու այլ ինվենտարի, անասունների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ձեռնարկությունների (խոշոր ջրաղացների, պանրագործարանների, կաթնատնտեսական գործատների, չորանոցների և այլն)։

գ) Խոշոր կալվածների, մանավանդ տնտեսական-ցուցակական նշանակություն կամ տնտեսական խոշոր տեսակարար կշիռ ունեցող կալվածների հանձնումը պրոլետարական դեկտատուրավի որգանների կառավարմանը և խորհրդային տնտեսությունների կազմակերպում։

դ) Նախկին կալվածատիրական և այլ գրավկած հողերի մի մասի հանձնումը գյուղացիության (նրա չքավոր և մասամբ միջակ շերտերին) ոգտագործման համար, մանավանդ այնտեղ, ուր այդ հողերը մշակվում ելին գյուղացիների կողմից վարձակալական սկզբունքով և ծառայում ելին իրեկ գյուղացիության տնտեսական կաշկանդման միջոց։ Գյուղացիությանը հանձնվող հողերի բաժինը վրառշվում և թե տնտեսական նպատակահարմարությամբ և թե գյուղացիությունը չեղոքացնելու ու նրան պրոլետարիատի կողմը նվաճելու անհրաժեշտությամբ։ Նա անխուսափելի իրեն պետք եւ լինի տարբեր ըստ զանազան պայմանների։

ե) Արգելումն հողի ամեն մի առուծախսի՝ հողը գյուղացիության ձեռքում պահպանելու և այդ հողի կապիտալիստների, մեծագնորդների և ուրիշների՝ ձեռքն անցնելու դեմ կովելու նպատակով։ Վճռական պայքար ընդդեմ այդ որենքը խախտողների։

զ) Պայքար վաշխառության դեմ։ Կաշկանդիչ գործարքների վոչնչացում։ Գյուղացիության շահագործ-

վող շերտերի պարտքերի վերացում։ Զքավորագույն գյուղացիների ազատումն հարկերից և այլն։

է) Պետական լայն ձեռնարկություններ գյուղատնտեսության արտադրողական, ուժերի բարձրացման համար. զարգացումն գյուղական ելեկտրիֆիկացիայի, տրակտորաշինության, քիմիական պարարտանյութերի արտադրության, զուատեսակ սերմացուների և ցեղային անասունների արտադրության զարգացումն խորհրդային կալվածներում, գյուղատնտեսական մելիորատիվ վարկի լայն դրումը և այլն։

ը) Գյուղական կոոպերացիայի և կոլեկտիվ արտադրության գյուղում գոյություն ունեցող բոլոր ձեվերի (ընկերությունների, կոմմունաների և այլն) աստարումը և ֆինանսավորումը։ Սիստեմատիկ պրոպագանդ գյուղացիության կոոպերատիվ միավորման (կոոպերացիա վաճառահանության, մատակարարման, վարկի կազմակերպման բնագավառում), գյուղացիության մասսայական ինքնագործունեյության հողի վրա և գյուղատնտեսական արտադրության խոշոր ձևերին անցնելու պրոպագանդ, մի բան, վոր հեշտացնում եւ շնորհիվ խոշոր տնտեսության անառարկելի տեխնիկական ու տնտեսական առավելություններին—թե տնտեսական ամենամեծ անմիջական շահավետությունը և թե աշխատավոր գյուղացիների ամենալայն մասսաներին ամենից մատչելի միջոցը սոցիալիզմին անցնելու։

գ. Առեվտուր յել վարկ

ա) Մասնավոր բանկերի պրոլետարական ազգայնացում (պրոլետարական պետության ձեռքը տալով վոս-

կու ամբողջ պաշարը, արժեքավոր թղթերը, ավանդները և ալին) և պետական, մունիցիպալ ու ալլ բանկերի հանձնումը պրոլետարական պետության ձեռքը։

բ) Բանկային ամբողջ գործի կենտրոնացում, բոլոր ազգայնացրած խոշոր բանկերի յենթարկումն կենտրոնական պետական բանկին։

գ) Մեծածախ առեարի և խոշոր մանրածախառնարակական ձեռնարկությունների (ապրանքային պահանջներ, եկատորներ, մթերանոցներ, ապրանքային պաշարներ և այլն) ազգայնացումն ու հանձնումը խորհրդային պետության որգանների ձեռքը։

դ) Սպառողական կոոպերացիայի ամեն ձևով խրախոսումը, վորպես բաշխիչ ապահարատի կարևորագույն բաղկացուցիչ մասի, հիմք ընդունելով նրա աշխատանքի սիստեմի միասնականությունն ու նրա շինարարության մեջ մասսաների ինքնազործ մասնակցության ապահովումը։

ե) Արտաքին առեարի մոնոպոլիան։

զ) Ոտարերկրացի և ներքին կապիտալիստներից արած պետական պարտքերի վերացումը։

դ. Աջականական պահանջուրյուն, կենցաղ յել այլն

ա) Բանվորական որվա կրճատում մինչև 7 ժամ և մինչև 6 ժամ այն գյուղերում, վորոնք առանձնապես վասակար են աշխատավորների առողջության համար։ Բանվորական որվա հետագա կրճատում և անցումն հագործա բանվորական շաբաթի արտադրությական զարգացած ուժեր ունեցող յերկրներում։ Բանվորական որվա կարգավորումն աշխատանքի արտադրողականության աճման համեմատ։

բ) Արգելումն ըստ կանոնի՝ իգական սեռի քուր անձանց համար գիշերավին աշխատանքի և առանձնապես վասարավ ճյուղերում կատարվող աշխատանքի։ Արգելումն մանկական աշխատանքի։ Արգելումն արտաժամյա աշխատանքների։

գ) Բանվորական որվա հատուկ կրծատումն յերիտասարդության համար (մաքսիմալ 6-ժամյա բանրիտասարդության համար)։ Յերիտասարդության աշխատանքի սոցիալիտական գեռեկան դեռահասների հավորական որ մինչ 18 տարեկան դեռահասների համար։ Յերիտասարդության աշխատանքի սոցիալիտական վերակազմություն նյութական արտադրության և ընդհանուր ու քաղաքական կրթության զուգակցության միջոցով։

դ) Ապահովագրվածների լիակատար ինքնավարության վրա հիմնված՝ բոլոր տեսակների սոցիալական ապահովագրություն (ինվալիդություն, ծերություն, դժբախտ գեղքեր, գործազրկություն և այլն) պետության հաշվին (և ձեռնարկատերերի հաշվով, ինչ պահով վոր գեռես պահպանվել են մասնավոր ձեռչափությունները)։

ե) Սահիտարական լավ ձեռնարկումներ, բժշկական անվարձ ոգնության կազմակերպում։ Պայքար սոցիալական հիվանդությունների վեմ (ալկոհոլիզմ, վեներական հիվանդություններ, տուբերկուլյոզ)։

զ) Որենքի առաջ և կենցաղի մեջ կնոջ սոցիալական հավասարեցումն տղամարդին, ամուսնական և ընտանեկան իրավունքի արմատական վերակառուցումն, մայրությունը սոցիալական ֆունկցիա ձանաչելը, մայրության և մանկության ողաշտպանություն։ Հասարակության կողմից մանուկներին ու յերիտասարդությանը խնամելու և նրանց գաստիարակության

դործի իրականացման սկիզբը (մանկական մսուրներ, պարտեզներ, տներ և այլն)։

Հիմն սրկների ստեղծումն տնալին տնտեսության աստիճանական բեռնաթափման համար (հասարակական խոհանոցներ և լվացքարաններ), կուլտուրական պլանաչափ պայքար կնոջը կաշկանդող իդեոլոգիայի և ավանդությունների դեմ։

Ե. Բնակարանային ֆոնդ

ա) Խոշոր տնատիրության գրավումն։

բ) Գրաված տների կառավարումը տեղական խորհուրդներին հանձնելը։

գ) Բուրժուական թաղերում բանվորներ բնակեցնելը։

դ) Փալատները, մասնավոր և հասարակական խոշոր շինուալիտյունները բանվորական կազմակերպությունների տնօրինության տակ գնելը։

ե) Բնակարանային շինարարության լայն ծրագիր անցկացնելը։

զ. Ազգային յեկ գաղուքային խնդիրներ

ա) Լիակատար ինքնորոշման իրավունքի ճանաչումն բոլոր ազգերի համար, անկախ նրանց ցեղային պատկանելությունից, այսինքն ինքնորոշում մինչև պետական անջատումը։

բ) Կապիտալիզմից ազտոված ժողովուրդների ազգական և տնտեսական բոլոր ուժերի կամավոր միավորումն ու կենտրոնացումը իմպերիալիզմի դեմ պայքարելու և սոցիալիստական տնտեսություն կառուցելու համար։

գ) Ամեն ձեր և վճռական պայքար ընդում ամեն տեսակ սահմանափակումների ու ճնշումների, վորոնք ուղղված են վորեւ ժողովրդի, ազգի կամ ցեղի դեմ, Բոլոր ազգերի ու ցեղերի լիակատար իրավահավասարությունը:

դ) Կապիտալիզմից ազատագրված ազգերի ազգային կուլտուրաների ապահովումն ու նրանց սատարելը խորհրդային պետության բոլոր ուժերով ու միջոցներով, այդ կուլտուրաների բովանդակության դարգացման գործում պրոլետարական հետեղական դիմաց անցկացնելով:

ե) Ամեն ձեր աջակցություն առաջներում ճնշված «մարզերի», «ծայրագավառների» և «գաղութների» տնտեսական, քաղաքական ու կուլտուրական աճմանը, նրանց սոցիալիստական փոխակերպման ուղղությամբ, իրական և լիակատար ազգային հավասարության համար հաստատուն բազա ստեղծելու նպատակով:

զ) Պայքար շովինիզմի, ազգային ատելության, ցեղային նախապաշարմունքների և փետողական ու կապիտալիստական բարբարոսության այլ իդեոլոգիական արդյունքների բոլոր մնացորդների դեմ,

է. Իդեոլոգիական ազդեցուրյան միջոցներ

ա) Տպարանների ազգայնացում:

բ) Լրագրային և հրատարակչական գործի մոնոպոլիա մտցնելը:

գ) Կիննեմատոգրաֆական խոշոր ձեռնարկությունների, թատրոնների և այլ համանման հիմնարկների ազգայնացումը:

դ) «Հողեւր արտագրության» ազգայնացրած միջոցների ոգտագործումն աշխատավորների ամենալայն քաղաքական և ընդհանուր լուսավորության համար և սոցիալիստական նոր կուլտուրալի կառուցման համար՝ պրոլետարական դասակարգացին բազալի վրա:

4. Պրոլետարական գիկտասուրալի հետեսական բաղաբականուրյան եիմունքները

Պրոլետարիատի գիկտատուրայի այս բոլոր խընդիրներն անցկացնելիս անհրաժեշտ և նկատի ունենալ հետեւյալ գրությունները.

1. Մասնավոր սեփականության լիակատար վերացումը հողի վերաբերմամբ և ամբողջ հողի ազգայնացումը չեն կարող անհապաղ կիրարկվել կապիտալիստական ամենից զարգացած յերկրներում, վորտեղ մասնավոր սեփականության սկզբունքը կարողացել ենորապես արմատանալ զյուղացիության ամենալայն շերտերում: Այդպիսի յերկրներում ամբողջ հողի ազգայնացումը կարելի յեն անցկացնել միայն տատիճանաբար, մի շարք փոխանցական ձեռնարկումների միջոցով:

2. Արտադրության ազգայնացումը, ըստ կանոնի, չպետք և տարածվի մանր ու միջակ տնտեսությունների վրա (զյուղացիների, արհեստավորների, տնակագործների, մանր ու միջակ առեւրականների, մանր արդյունաբերողների և այլն): Նախ, այն պատճառով, վոր պրոլետարիատը չի կարող խիստ տարբերություն չդնել հասարակ ապրանքարտագրողի աշխատավորական սեփականության (այն արտադրողի, վորին կարելի յեն և պետք և աստիճանանաբար ներգրավել սոցիալիստական շինարարության հունի մեջ) և կապիտա-

լիստի շահագործողական սեփականության միջև, վորի լիկվեդացիան սոցիալիստական շինարարության անպայման նախադրյալն եւ:

Յերկրորդ, այն պատճառով, վոր իշխանությունը վերցրած պրոլետարիատը չի կարող ունենալ բավական քանակությամբ կազմակերպչական ուժեր, մասնավանդ դիկտատուրայի առաջին փուլերում, վորպեսզի վոչ միայն կործանի կապիտալիզմը, այլ և անմիջապես կազմակերպի մանր և միջակ անհատական արտադրական միավորների կապը նոր, սոցիալիստական հիմքի վրա. Այդ մանր անհատական տնտեսությունները (նախ և առաջ գյուղացիական տնտեսությունները) միայն աստիճանաբար կներգրավվեն արտադրության ու բաշխման ընդհանուր սոցիալիստական կազմակերպության մեջ՝ նրանց կոլեկտիվացմանը բոլոր ձեւերին պրոլետարական պետության կողմից ցուց տրվող սիստեմատիկ հզոր աջակցությամբ։ Նըրանց տնտեսական կենսաձևի ամեն մի բռնի բեկում և նրանց հարկադրական կոլլեկտիվացում միայն բացասական հետեւանքների հիասցնելին։

3. Արտադրական մանր միավորների նշանավոր քանակի առկայությունը (առաջին հիրթին գյուղացիական տնտեսությունների, ֆերմերների, արհեստավորների, մանր առևտրականների և այլ նմանների տնտեսությունների) վոչ միայն գաղութներում, կիսագաղութներում և տնտեսապես հետամնաց լերկությունը, վորտեղ մանր-բուրժուական մասսաները բնակչության ահազին մեծամասնություն են կազմում, այլ և կապիտալիստական համաշխարհային տնտեսության կենտրոններում (Ամերիկայի Միացյալ Նահանգները,

Քերմանիան, Նմանապես և վորոշ չափով Անգլիան) անհրաժեշտ ե դարձնում այս կամ այն չափով պահպանումն—զարգացման սկզբնական աստիճաններին— Տնտեսական կապի ժուկացական ձեվերի, փողային սիստեմի և այլն։ Տնտեսական կենսաձևների գանազանակերպությունը (սոցիալիզացիայի յենի արկված խոշոր ինդուստրիալից մինչև մանր գյուղացու և արհեստավորի տնտեսությունը), վոր չի կարող պայքար չառաջացնել այս տարբեր տնտեսական ձևերի միջև։ այս տնտեսական ձևերին համապատասխանող զանազանակերպությունը դասակարգերի և դասակարգային խմբավորումների՝ տնտեսական գործունելյության տարբեր մըզումներով և նրանց տնտեսական տարբեր շահերի պայքարով։ Վերջապես, տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում առկայությունը սովորութների և պահանջությունների, վորոնք ժառանգություն են մնացել բուրժուական հասարակությունից և չեն կարող մեկն վերացվել, — այս ամենը պրոլետարիատի տնտեսական զեկավարությունից պահանջում և ճիշտ զուգացում—շուկայական հարաբերությունները հիմք ընդունելով—սոցիալիստական խոշոր արդյունաբերության և հասարակ ապրանքարտագրողների մանր տընտեսության, այսինքն այնպիսի զուգակցում, վորը ապահովում ե սոցիալիստական արդյունաբերության առաջնորդող վերը և միանույն ժամանակ գյուղացիական տնտեսությունների ամբողջ հիմնական մասսայի մաքսիմալ վերելքը։ Ուստի, վորքան ավել և մասնատված մանր գյուղացիական աշխատանքի տեսակարար կերպ լերկրի ընդհանուր տնտեսության մեջ, այնքան ավել և շուկայական հարաբերությունների ծավալը,

այնքան փոքր ե անմիջական պլանային ղեկավարության նշանակությունը, այնքան ավելի չափով և ընդհանուր տնտեսական պլանը հիմնվում տարերայնորեն դասավորվող տնտեսական հարաբերությունների նախատեսման վրա: Ընդհակառակը, վորքան պակաս և մանր տնտեսության տեսակարար կշիռը, վորքան նշանավոր և հանրայնացրած աշխատանքի բաժինը, վորքան հզոր են արտադրության միջոցների կոնցենտրացիայի և սոցիալիզացիայի յենթարկած մասսաները, այնքան փոքր ե շուկայական հարաբերությունների ծավալը, այնքան մեծ ե պլանի նշանակությունը տարերքի համեմատությամբ, այնքան նշանավոր և համայնապարփակ են անմիջական պլանային ղեկավարության մեթոդները թե արտադրության բնագավառում և թե բաշխման բնագավառում:

Սոցիալիզացիայի յենթարկած խոշոր արտադրության տեխնիկական և տնտեսական առավելությունները, տնտեսական բոլոր կարևորագույն իշխող բարձունքների կենտրոնացումը (ինդուստրիայի, տրանսպորտի, հողագործական խոշոր տնտեսությունների, բանկերի և այլն) պերուետարական պետության ձեռքում, տնտեսության պլանային ղեկավարությունը, իր ամբողջությամբ վերցրած պետական ապահովատի հզորությունը (բյուջե, հարկեր, վարչական որենսդրություն և որենսդրություն առհասարակ) պլոտետարական դիկտատորապարագույն կողմից կիրարկվող դասակարգավորն ճիշտ քաղաքականության ղեկում, այսինքն դասակարգավորն հարաբերակցությունների ճիշտ հաշվառքում տանում են ղեպի շարունակական ու սիստեմատիկ վտարումն մասնավոր կապիտալի մուա-

ցորդների, նմանապես և կապիտալիստական նոր ծիրիչ՝ թե քաղաքում և թե գյուղում (խոշոր գյուղացիություն, կուլակություն)՝ վորոնք առաջանում են հասարակ ապրանքարտազողների տնտեսության զարգացման հետ միասին ավելի կամ պակաս չափով ազատ առևտության համարի և շուկայական հարաբերությունների պայմաններում: Մյուս կողմից, դրա հետ միաժամանակ տեղի յի ունենում գյուղացիական տնտեսությունների (այսինքն մանր և միջակ տնտեսության) հիմնական մասսաների սիստեմատիկ ներգրավումը՝ նրանց կոռպերացման և տնտեսական կոլեկտիվ ձեփերի աճման միջոցով—զարգացող սոցիալիզմի ընդհանուր սիստեմի մեջ: Տնտեսական գործունեյության ձեփերն ու մեթոդները, վորոնք կապված են շուկայական հարաբերությունների հետ և կապիտալիստական են արտաքուստ (արժեքային հաշիվ, աշխատանքի փողացին վարձատրություն, տուրեսու, վարկ և բանկեր և այլն), սոցիալիստական հեղաշրջման լծակների դեր են խաղում, վորչափով վոր այդ լծակներն ավելի ու ավելի մեծ թափով սպասարկում են հետեղական սոցիալիստական տիպի ձեռնարկություններին, այսինքն տնտեսության սոցիալիստական հատվածին:

Այսպիսով, շուկայական հարաբերությունները պլոտետարական դիկտատորապարագույն պայմաններում—խորհրդակին պետության ճիշտ քաղաքականության պարագայում—իրենց զարգացման մեջ կրում են սեփական կործանումը՝ նպաստելով մասնավոր կապիտալի վտարման, գյուղացիական տնտեսության փոխակերպման, արտադրության միջոցների հետագա կենտրոնացման ու կոնցենտրացիայի՝ պրոլետարական պե-

տության ձեռքում, — նրանք դրանով իսկ նպաստում հն առհասարակ ընկայական հարաբերությունների հաղթահարմանը:

Կապիտալիստների հավանական ռազմական ինտերվենցիալի և պրոլետարիատի դիկտատուրայի գեմ տևական հականեղափոխական պատերազմի դեպքում տնտեսական ղեկավարությունը պետք է յելակետ ունենա նախ և առաջ պրոլետարական դիկտատուրայի պաշտպանության շահերը. ընդդիմին կարող ե անհրաժեշտություն առաջ գալ ռազմակոմմունիստական տնտեսական քաղաքականության («ուզմական կոմմունիզմի»), վորը վոչ այլ ինչ ե, բայց յեթե կազմակերպումն ռացիոնալ սպառման ռազմական պաշտպանության նպատակով՝ կապիտալիստական խմբերի վերաբերմամբ ուժեղացրած սեղմում գործադրելու սիստեմով (գրավումներ, ռեկվիզիցիաներ և այլն), ազգատ առևտրի և շուկայական հարաբերությունների ավելի կամ սլակա լիսկատար լիկվիդացիայով, մասն արտադրողի տնտեսական անհատական մղումների խիստ խախտմամբ, վոր կապված է յերկրի արտադրողական ուժերի անկման հետ: «Ռազմական կոմմունիզմի» այդ քաղաքականությունը, քայլայիլով բանվոր դասակարգին թշնամի շերտերի նկատմական բարդու յերկրի ներսում, ապահովելով արդեն ինդած պաշտամների ռացիոնալիստումը, նպաստելով պրոլետարական դիկտատուրայի ռազմական պայքարին և իր պատմական հիմնավորումը գտնելով գրանում, այնուամենայնիվ, չի կարող դիտվել վորպես պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական նորմալ քաղաքականության սիստեմ:

5. Պրոլետարիատի դիկտատուրան յեվ գասաւ կարգերը

Պրոլետարիատի դիկտատուրան նրա դասակարգական կովկի տարրանակուրյունն է նոր պայմաններում: Պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար ե, արյունուտ և անարյուն, բռնական և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական պայքար ընդդեմ հին հասարակության ուժերի և ավանդությունների, ընդդեմ կապիտալիստական արտաքին թշնամիների, ընդդեմ շահագործողական դասակարգերի մնացորդների՝ յերկրի ներսում, ընդդեմ նոր բուրժուազիայի ծիլերի, վորոնք առաջ են գալիս գեռնս չըհաղթահարված ապրանքային արտադրության հիմքի վրա:

Քաղաքացիական պատերազմի լիկվիդացիայի պայմաններում դասակարգային համառ կոփվը շարունակվում է նոր ձեռքով, մի կողմից՝ տնտեսական հին կենսաձեերի ու նրանց նոր ծիլերի և միուս կողմից տնտեսության սոցիալիստական ձեերի միջև մղվող պայքարի ձևով, ընդդմին պայքարի ձեռքը փոխվում են սոցիալիստական զարգացման տարբեր ետապներում, և նրա առաջին աստիճաններում այդ պայքարը վորոշ պայմաններում կարող է սրվել:

Պրոլետարական դիկտատուրայի սկզբնական աստիճանին պրոլետարիատի քաղաքականությունն այլ դասակարգերի և հասարակական խմբերի վերաբերմամբ յերկրի ներսում վորոշվում է հետեւյալ դրություններով.

1. Խոշոր բուրժուազիան յեվ կալվածաերերը, սպա-

մաթիվ վոչ-պրոլետարական խավերի կառ նըսանց մեծամասնության միջն, դաշինքի, վոր կնքվում և ընդդեմ կապիտալի, դաշինքի, վոր կնքվում և կապիտալի լիակատար տապալման, բուրժուազիայի դիմագրության և նրա կողմից արվող՝ ռեստավրացիայի փորձերի կատարյալ ճնշման նպատակով, դաշինքի, վոր կնքվում և սոցիալիզմի վերջնական ստեղծման և ամրապնդման նպատակով:

4. Քաղաքային մանր բուժուազիան, վոր շարունակ տատանվում և ծալրահեղ սկ-հարյուրականությունից մինչև պրոլետարիատի վերաբերմաք տածած համակրանքը, ճիշտ նույնպես պետք և չեղոքացվի և ըստ հնարավորության նվաճվի պրոլետարիատի կողմը: Դըրան կարելի է հասնել պահպանելով նրա մանր սեփականությունը, տնտեսական շրջանառության վորոշ ազատություն, վոչնչացնելով վաշխառուական-կաշկանդիչ վարկը և զանազանակերպ տեսակի ողնություն ցուց տալով պրոլետարիատի կողմից այն պայքարում, վոր նա մզում և կապիտալիստական ճնշման բոլոր և ամեն տեսակ ձեռքի դեմ:

6. Մասսայական կազմակերպությունները պրոլետարկան գիւեառուրայի սիստեմի մեջ

Պրոլետարական դիկտատուրայի այս բոլոր խընդիրների կատարման ժամանակ արմատականորեն փոփոխում և մասսայական կազմակերպությունների, առաջին հերթին բանվորական կազմակերպությունների խնդիրներն ու ֆունկցիաները, Բանվորական մասսայական կազմակերպությունները, վորոնց մեջ պրոլետարիատի ամենալայն խավերն առաջին անգամ կազ-

մակերպչորեն համախմբվում և դաստիարակվում են, արհեստակցական (արտադրական) միուրյունները՝ կապիտալիզմի որոք հանդիսանում են գործադուլացին պայքարի, իսկ հետո տրեստիֆիկացիայի լինթարկված կապիտալի և նրա պետության դեմ ուղղված մասսայական պայքարի հիմնական գործիքը: Պրոլետարական դիկտատուրայի որոք նրանք դառնում են նրա ամենատպավոր լծակը, կոմմունիզմի այնպիսի դպրոց, վոր գլխավոր լծակը, կոմմունիզմի այնպիսի դպրոց, վոր պրոլետարիատի ահագին մասսաներ և ներգրավում արտադրության սոցիալիստական կառավարման գործի մեջ, մի կազմակերպություն, վորն անմիջապես կապված և պետական ապավարատի բոլոր մասերի հետ, ազգում և նրա աշխատանքի բոլոր ճյուղերի վրա, պաշտպան և կանգնած բանվոր դասակարգի թե տեխնիկան և թե հրատապ շահերին և պայքար և մղում խորհրդային պետության որգանների բյուրոկրատական ազավաղությունների դեմ: Այսպիսով, արհմիությունները դառնում են պրոլետարիատի տնտեսական և ընդհանուր-պետական կազմակերպությունների հիմնական վողնաշարը, վորչափով նրանք շինարարական աշխատանքի համար տալիս են դեկավար կադրեր, վոր չափով նրանք այդ աշխատանքի մեջ են ներգրավում պրոլետարիատի լայն խավեր և վոր չափով նրանք իշխնց հատուկ խնդիրն են համարում պայքարն ընդդեմ բյուրոկրատական աղավաղությունների, վորոնք անխուսափելիորեն առաջ են գալիս պրոլետարիատին խորթ դասակարգային ազգեցությունների և մասսաների՝ դեռևս վոչ բավականաչափ կուլտուրականության հողի վրա:

Բանվոր դասակարգի կոոպերատիվ կազմակերպու-

բյուները, վորոնք կապիտալիզմի պայմաններում—ռեֆորմիստական ուստովիաններին հակառակ—դատապարտված են համեմատաբար համեստ դերի, իերքեմն այլասերվում են կապիտալիստական սիստեմի ընդհանուր պայմանների շնորհիվ ու առաջնորդների ռեֆորմիստական քաղաքականության հետևանքով, դառնում այդ կապիտալիստական սիստեմի կցորդները, պրոլետարիատի դիկտատուրայի որոք կարող են և պետք ե դառնան բաշխման ապարատի կարեռագույն բաղկացուցիչ մասերը:

Վերջապես, զյուղացիուրյան զյուլատեսեսական կուպերացիան (վաճառահանական, գնողական, վարկային, արտադրական)՝ հարկավոր հսկողության պարագայում, յեթե սիստեմատիկ պայքար մզվի կապիտալիստական տարբերի դեմ, և ապահովվի պրոլետարիատի յեաւից գնացող աշխատավորների իրոք լայն սասսաների իրական մասնակցությունը,՝ կարող ե և պետք ե դառնա քաղաքն ու զյուղը շաղկապող կազմակերպչական հիմնական ձեռքից մեկը:

Գյուղացիական տնտեսությունների կոռուպերատիվ միավորումները, վորոնք կապիտալիզմի պայմաններում—վոր չափով նրանք կենսունակ ելին դուրս գալիս—մեծ մասամբ իրենք անխուսափելիորեն դառնում ելին կապիտալիստական ձեռնարկություններ, վորվիետ կախված ելին կապիտալիստական ինդուստրիալիզմից, կապիտալիստական բանկերից, առհասարակ կապիտալիստական միջավայրից և կապիտալիստական միավորներից և գործողության միասնականություն, երագործելով այդ միասնականությունը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կոմունիստական կուսակցության դեկավար դերի միջոցով:

զարգանում են այլ հարաբերությունների սիստեմում և կախված են պրոլետարական ինգուստրիալիցիզ, պրոլետարական բանկերից և այլն: Պրոլետարիատի ձիւտ քաղաքականության պարագայում, կապիտալիստական տարբերի գեմ—կոռպերատիվ կազմակերպությունների ներսում թե նրանցից դուրս—սիստեմատիկ դասակարգացին կում մզելու պարագայում, սոցիալիստական ինգուստրիալիցի զեկավարության պարագայում՝ գյուղատնտեսական կոռպերացիան կղառնա զյուղի սոցիալիստական փոխակերպման, նրա կոլեկտիվացման կարևորագույն լժակներից մեկը: Այս ամենը չի բացասում հնարավորությունն այն բանի, վոր մի քանի յերկրներում սկզբնական շրջանում թե սպառղական և թե մանավանդ գյուղատնտեսական կոռպերատիվ միավորումները, բուրժուազիալի և նրա սոցիալ-դեմոկրատական գործակալների զեկավարությամբ կարող են հանդիսանալ հականեղափոխական կործունելյության և բանվորական հեղափոխության տնտեսական շինարարության սաբուտաժի պատվար:

Ռազմական և շինարարական ամբողջ աշխատանքի մեջ, վոր կատարվում ե պրոլետարիատի ամենալանազան կազմակերպությունների կողմից, այն կազմակերպությունների, վորոնք պետք ե փաստորեն լինեն խորհրդային պետության լժակները, նրան բանվոր դասակարգի բոլոր խավերի ամենալայն մասսաների հետ կապող լժակները, պրոլետարիատն ապահովում ե կամքի և գործողության միասնականություն, երագործելով այդ միասնականությունը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կոմունիստական կուսակցության դեկավար դերի միջոցով:

Պրոլետարիատի կուսակցությունը անմիջապես հենվում է ալիևստակցական միությունների և մի շարք այլ կազմակերպությունների վրա, վորոնք ընդգրկում են բանվորների մասսաներին, իսկ նրանց միջոցով և գյուղացիներին (խորհուրդներ, կոոպերացիա, կոմիտմիություն և այլն), այդ լծակների միջոցով դեկավարելով խորհրդացին համայն սիստեմն իր ամբողջությամբ։ Միայն մասսայական բոլոր կազմակերպությունների կողմից խորհրդացին իշխանությանը ցույց տված անձնվեր աշխացությամբ, միայն դասակարգացին կամքի լիակատար միասնականության պարագայում, միայն կուսակցության դեկավարությամբ կարող կլինի պրոլետարիատը կատարել նոր հասարակության կազմակերպչի իր դերը։

7. Պրոլետարիատի գիշատուրան յեզ կուլտուրական հեղափոխությունը

Մարդկային նոր հասարակության կազմակերպի այդ դերը յենթագրում է իր իսկ պրոլետարիատի կուլտուրական հասունացումը, իր իսկ կողմից իր սեփական բնության վերամշակումը, նրա կողմից նոր և նոր կադրերի առաջանանումը, վորոնք ընդունակ են տիրելու գիտության, տեխնիկայի և կառավարման բոլոր միջոցներին՝ սոցիալիզմի և սոցիալիստական նոր կուլտուրայի շինարարության նպատակով։

Յեթե բուժուական հեղափոխությունն ընդդեմ ֆեոդալիզմի յենթագրում է, վոր բուն ֆեոդալական հասարակության ծոցում կա նոր դասակարգ, վորը իր կուլտուրական հասունությամբ քարձր և կանգնած տիրապետող դասակարգից և արդեն ֆեոդալական հա-

սարակության սահմաններում հանդիսանում է տնտեսական կլանքի հեգեմոնը, ապա սրոլետարական հեղափոխությունը զարգանում է ուրիշ պայմաններում։ Կապիտալիստական հասարակության մեջ լինելով տընտեսապես շահագործված, քաղաքականապես ճնշված և կոլյուրապես նեւալ դասակարգ, բանվոր դասակարգը միայն փոխանցական շրջանում, միայն պետական իշխանությունը նվաճելուց հետո, միայն կործանելով կըրթության բուժուական մոնոպոլիան և ամբողջ գիտությանը տիրելով, միայն շինարարական մեծագույն աշխատանքի փորձով և վերամշակում իր սեփական բնությունը։ Կոմմունիստական գիտակցության մասսայական առաջացման և սոցիալիզմի բուն գործի համար անհրաժեշտ և մարդկանց մասսայական փոխականն, վոր հնարավոր և միայն գործնական շարժման մեջ, հեղափոխությունն անհրաժեշտ է վոչ միայն այն պատճառով, վոր չի կարելի վոչ մի այլ իեղանակով տապալել տիրապետող դասակարգը, այլ և այն պատճառով, վոր տապալող դասակարգը միայն հեղափոխության մեջ կարող է մաքրվել հին հասարակության ամբողջ կեղտից և ընդունակ դասնալ ստեղծելու նոր հասարակություն։

Վոչնչացնելով կապիտալիստաների դասակարգի մոնոպոլիան արտադրության միջոցների վերաբերմամբ, բանվոր դասակարգը պետք է նմանապես վոչնչացնի և բուժուական մոնոպոլիան կրության վերաբերմաբ, այսինքն տիրի ամբողջ դպրոցին մինչև բարձրագույնը ներառյալ։ Մանավանդ կարևոր խընդիր և հանդիսանում ողոլետարիատի գործի համար բանվոր դասակարգից մասնագետներ նախապատրաս-

տելը ինչպես արտադրության բնագույքառում (ինժեներներ, տեխնիկներ, կազմակերպիչներ և այլն), այնպես ել ուղմական գործի, գիտության, արվեստի և այլ բնագավառներում։ Այդ խնդրի կողքին կանգնած է պրոլետարական մասսաների ընդհանուր կուլտուրական վլուելիք, նրանց քաղաքական լուսավորության, գիտելիքների և տեխնիկական փորակավորման մակարդակի բարձրացման, հասարակական աշխատանքին և կառավարման գործին վարժվելու, բուռժուական և քաղքենիական նախապաշտունքների մնացորդների գեմ պայքարելու խնդիրը։

Միայն այն չափով, վոր չափով պրոլետարիատը իր ավանդարդային խավերն և առաջահանում սոցիալստական շինարարության և կուլտուրայի այս բոլոր «իշխող պոստեր» համար, միայն այն չափով, վոր չափով այդ խավերն ավելի ու ավելի աճում են, դասակարգի նորանոր անդամներ ներդրավելով կուլտուր-հեղափոխական վերաշինության պրոցեսի մեջ և աստիճանաբար հաղթահարելով բուն ներդասակարգային բաժանումը՝ պրոլետարիատի «առաջավոր» և «հետամաց» խավերի, միաժամանակ ստեղծվում են և սոցիալստական հաղթական շինարարության յիրաշխիք, և յիրաշխիքն ընդգեմ բյուրոկրատական փոման ու դասակարգային վերասերման։

Սակայն պրոլետարիատը հեղափոխության պրոցեսում վերամշակում ե վոչ միայն իր սեփական բընությունը, այլև մյուս դասակարգերի, առաջին հերթին քաղաքի և գյուղի բազմաթիվ մանր-բուրժուական խավերի, մասնավանդ գյուղացիության աշխատավոր խավերի բնությունը, չաղորդակից անելով ամենալայն

մասսաները կուլտուրական հեղափոխության, նրանց սոցիալիստական շինարարության պրոցեսի մեջ ներշնորթելով, միավորելով և կոմմունիստորեն լուսավորելով նրանց իր արամաղբության տակ գտնվող բոլոր մեթոդներով. վճռական պայքար մղելով հակառակության ու համբարային բոլոր իդեոլոգիաների դեմ, առանձնապես համառ և սիստեմատիկ կերպով հաղթահարելով գյուղի ընդհանուր և կուլտուրական հետամնացությունը, բանվոր դասակարգը զբանով իսկ նախապատրաստում ե—տնտեսության կոլեկտիվ ձեփերի աճման հողի վրա—հասարակուրյան դասակարգային բաժանման հաղթահարումը։

Ամենալայն մասսաներն ընդգրկող կուլտուրական հեղափոխության խնդիրների շարքում հատուկ տեղ ե բանում պայքարն ընդգեմ ժողովուրդների ոպիումի—կրոնի, պայքար, վոր պետք ե մղվի սիստեմատիկ ու անշեղ կերպով։ Պրոլետարական իշխանությունը պետք ե վոչնչացնի պետական ամեն մի ստարումը յեկեղեցուն, վորը տիրապետող դասակարգերի գործակալությունն ե հանդիսանում, պետք ե վոչնչացնի յեկեղեցու ամեն մի միջամտությունը դաստիարակության և կրթության պետականորեն-կազմակերպված գործին ու անխնա ձնշի յեկեղեցական կազմակերպությունների հականեղագուխական գործունեյությունը։ Միևնույն ժամանակ թույլատրելով դավանության ազատությունը և վոչնչացնելով առաջներում տիրապետող կրոնի արտօնյալ դրությունը, պրոլետարական իշխանությունը իրեն մատչելի բոլոր միջոցներով մղում ե հակակրոնական պրոպագանդ և վերակառուցում դաստիարակչական ու կրթական ամ-

բողջ աշխատանքը, հիմունք ունենալով գիտական մատերիալիստական աշխարհայացքը:

8. Παγκόσμιοι αρχηγοί των κρατών πρέπει να συναντήσουν την παγκόσμια συνάντηση στην Αθήνα

Պրոլետարիատի միջազգային հեղափոխությունը
կազմավորվում է տարբեր ժամանակների ու տարբեր
տեսակների պրոցեսսներից՝ զուտ պրոլետարական հե-
ղափոխություններից, բուրժուական-ղեմոկրատական
տիպի հեղափոխություններից, վորոնք վերաճում են և
դառնում պրոլետարիատի հեղափոխություններ—ազ-
գային ազատազրական պատերազմներից, գաղութային
հեղափոխություններից։ Միայն վերջին հաշվով և հե-
ղափոխական պրոցեսսը հասցնում պրոլետարիատի հա-
մաշխարհային դիլատուրային։

կապիտալիզմի զարգացման անհամաշափությունը, վոր սրբեց իմպերիալիստական շրջանում, առաջացրեց նրա տիպերի զանազանակերպություն, նրա հասունության տարբեր աստիճաններ առանձին յերկրներում, հեղափոխական պրոցեսսի զանազանակերպ և սպեցիֆիկ պայմաններ: Այս հանգամանքները պատմականորեն միանդամայն անխուսափելի յեն դարձնում պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու ուղիների յեվ տեմպերի զանազանակերպությունը, մի շարք յերկրներում փոխանցական վորոշ աստիճանների անհրաժեշտությունը, վորոնք տանում են դեպի պրոլետարիատի դիկտատուրան, իսկ այնուհետև նսանապես կառուցված սոցիալիզմի ձևերի զանազանակերպությունն առանձին յերկրներում:

Առանձին յերկրներում պըոլետարիտտի գիշտա-
տուրայի անցնելու պայմանների և ուղիների զանազա-
նակերպությունը սխեմատիկ կերպով կալելի յե վե-
րածել յերեք հիմնական տիպերի:

բաժեկ յերեք հրամական ու ի ու ի վերը կապիտալիզմի յերկրներ (Ամերիկայի Մի-
ացյալ Նահանգները, Գերմանիա, Անգլիա և այլն),
վորոնք ունեն արտադրողական հզորագույն ուժեր,
բարձր աստիճանի կենտրոնացված արտադրություն,
հարաբերաբար փոքր նշանակություն ունեցող մանր
տնտեսություն, վաղաց և վեր արդեն կազմավորված
բուրժուական-դեմոկրատական քաղաքական կարգ:
Այդ լեռներում քաղաքական բնագավառում ծրա-
գրի հիմնական պահանջ հանդիսանում և ուղղակի
անցումը պրոլետարական դիկտուրալին: Տնտեսա-
կան բնագավառում ամենից բնորոշ պահանջներն են՝
ամբողջ խոշոր արտադրության եքսպրոպրիացիան,
նշանավոր քանակությամբ պետական խորհրդային
տնտեսությունների կազմակերպումը և, ընդհակառա-
կը, հողի համեմատաբար անշահն բաժնի հանձ-
նումը գլուղացիությանը. շուկայական տարերաբային
հարաբերությունների համեմատաբար փոքր ծավալը
առնառարակ սոցիալիստական դարգացման և մասնա-
վորապես գյուղացիական տնտեսության կոլեկտիվաց-
ման արագ տեմպ:

Կապիտալիզմի զարգացման միջակ մակարդակ
ունեցող լերկըներ (Սպանիա, Պորտուգալիա, Լիսա-
տան, Հունգարիա, Բալկանյան լերկըները և այլն),
վորոնք կիսաֆեոդալական հարաբերությունների հաշ-
ուակոր մնացորդներ ունեն գլուղատնառեռթյան մեջ,
սոցիալիստական շինարարության համար անհրաժեշտ

Նյութական նախադրյալների վորոշ մինիմում, — վորոնց բուրժուական-դեմոկրատական վերակազմությունը ավարտված չեղուս։ Այդ յերկրներից միանիսում հնարավոր ե բուրժուական-դեմոկրատական հեղափոխության ավելի կամ պակաս արագ վերաճումը և սոցիալիստական հեղափոխությունը դառնալը. մյուսներում — պրոլետարական հեղափոխությունների տիպերը, բայց բուրժուական-դեմոկրատական ընույթը ունեցող խնդիրների ավելի մեծ ծավալով։ Հետևապես, պրոլետարիատի դիկտատուրան այստեղ կարող ե առաջ դալ և վոչ մեկեն, այլ պրոլետարիատի և գյուղացիության գեմոկրատական դիկտատուրայից պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրային անցնելու պրոցեսում. այնտեղ, վորտեղ հեղափոխությունը գարգանում ե անմիջապես իրեն պրոլետարական հեղափոխություն, նա յենթագրում ե լայն ագրար-գյուղացիական շարժման ղեկավարությունը պրոլետարիատի կողմից. ագրարացին հեղափոխությունն առհասարակ խաղում ե խոշորագույն, իսկ յերեքն վճռական դեր. հողային խոշոր սեփականության եքսպլոյացիալի պրոցեսում՝ դրավված հողի նշանավոր բաժինը գյուղացիության տրամադրության տակ ե անցնում. շուկայական հարաբերությունների ծավալը պրոլետարիատի հաղթանակից հետո նշանավոր ե. գյուղացիության կոռպերացման, իսկ հետո նաև նրա արտադրական միավորման խնդիրն ահազին տեղ ե բռնում սոցիալիստական շինարարության այլ խնդիրների մեջ. Այդ շինարարության տեմպը համեմատաբար դանդաղ ե.

Գաղուրային յեվ կիսագաղուրային յերկրներ (Զի-

նաստան, հնդկաստան, և այլն) և կախյալ յերկրներ (Արգենտինա, Բրազիլիա և այլն), վորոնք ունեն ինդուստրիալի վորոշ սաղմեր, իսկ յերբեմն ել նշանավոր գարգացում, վոր, սակայն, մեծ մասամբ, բավական չեն սոցիալիստական ինքնուրություն շինարարության համար, յերկրներ, վորտեղ գերակշռում են ֆեոդալական միջնադարյան հարաբերությունները կամ «արտագրության» ասիական յեղանակի» հարաբերությունները թե յերկրի եկոնոմիկայի և թե նրա քաղաքական վերնաշնչենքի մեջ, վերջապես, վորտեղ կարեւորագույն արգլունաբերական, առևտրական, բանկային ձեռնարկությունները, տրանսպորտի հիմնական միջոցները, հողային լատիֆունդիաներն ու պլանտացիաները և այլն կենտրոնացած են ոտարերկրյա իմպերիալիստական խմբակների ձեռքում. Այստեղ կենտրոնական նշանակություն ունեն մի կողմից պալքարն ընդդեմ ֆեոդալիզմի, շահագործման նախակապիտալիստական ձերի և գյուղացիության՝ հետեղականությունը հեղափոխությունը, մյուս կողմից պայքարն ընդդեմ ոտարերկրյա իմպերիալիզմի՝ ազգային անկախության համար պրոլետարիատի դիկտատուրային անցնելն այստեղ իրեն կանոն հնարավոր ե միայն մի շարք նախապատրաստական աստիճանների միջոցով, միայն իրեն արգլունք մի ամբողջ շրջանի, յերբ բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը վերաճում ե և դառնում սոցիալիստական հեղափոխություն, իսկ սոցիալիստական հաջող շինարարությունը — մեծ մասամբ — միայն հնարավոր ե պրոլետարական դիկտատուրայի յերկրների կողմից ցույց տրվող ուղղակի սատրաման պարագայում։

Ել ավելի հետամբաց յերկրներում (որինակ՝ Աֆ-
րիկայի միքսնի մասերում), վորտեղ գրեթե չկան
կամ ամեններն չկան վարձու բանվորներ, վորտեղ ըլ-
նակչության մեծամասնությունն ապրում է ցեղային
կենցաղի պայմաններում, և վորտեղ դեռևս պահպան-
վել են նախնակարյան տոհմալին ձևերի մնացորդները,
վորտեղ գրեթե բացակայում է ազգային բուրժուա-
զիան, և վորտեղ ուսարերկրա իմպերիալիզմն առաջին
հերթին խաղում է հողը խող պատերազմական ոկկու-
պանտի գեր, — կենտրոնական նշանակություն ունի
ազգային ազատագրության համար մզվող պայքարը:
Ազգային ազստամբությունն ու նրա հաղթանակն
այստեղ կարող են ճանապարհ բանալ դեպի սոցիա-
լիզմը տանող զարգացման համար, առանց առանսա-
րակ կապիտալիզմի աստիճանն անցնելու, յեթե իրոք
հզոր ոգնություն ցուց տրվի պրոլետարական դիկտա-
տուրակի յերկրների էություն:

Ազապես, ուրիմն, այն դարաշրջանում, յերբ կա-
պիտականական զարգացած յերկրներում իբրև որվա
հերթական խնդիր առաջալը վում և իշխանության
նվաճումը պլուտարխատի կողմից. յերբ արդեն առ-
կա գոյություն ունի ԽՍՀՄ պրոլետարիատի դիկտա-
տուրան, վոր հանդիսանում է համաշխարհական նշա-
նակություն ներկայացնող գործոն, — գաղութային և
կիսագաղութային յերկրներում ազատազրական շար-
ժումները — վորոնց առաջացրել ե համաշխարհային կա-
պիտական թափանցումն այդ յերկրները — կարող են
ներանց — չնայած մեկուսացած վերցրած այդ յերկրների
հասարակական հարաբերությունների տհասության —
հասցնել սոցիալիստական զարգացման, ժնուրիիլ այն

ոգնության ու սատարման, վոր ցույց կտրվի պրոլետարա-
կան դիկտատուրայի յեվ առնասարակ միջազգային պրո-
լետարական շարժման կողմից:

9. Պայքար պրոլետարիատի համաշխարհային դիկ- տատուրայի համար յեվ գաղութային հեղափոխու- թյունները

Հեղափոխական պայքարի հատուկ պայմանները
գաղութային և կիսազաղութային կարերագույն յեր-
կըրներում, պրոլետարիատի և գյուղացիության դե-
մոկրատական դիկտատուրայի համար մզվող պայքարի
և այդ դիկտատուրայի՝ պրոլետարական դիկտատու-
րայի փոխակերպվելու տեսական շրջանի անխուսափե-
լիությունը, վերջապես, ազգային մոմենտների վճռո-
ղական նշանակությունը այդ յերկրների կոմմունիս-
տական կուսակցությունների առաջ դնում են մի
տեսակ խնդիրներ, վորոնք նախապատրաստա-
շարք հատուկ խնդիրներ, վորոնք պրոլետարիատի
կան աստիճանն են ներկալացնում պրոլետարիատի
դիկտատուրայի ընդհանուր խնդիրների նկատմամբ:
Այդ հատուկ խնդիրներից կարևորագույն խնդիրներ
համար ունենալու համարում և հե-
տեւալները.

1. Ոտարերկրյա իմպերիալիզմի, ֆեոդալների և
կալվածատիրական բլուրոկրատիայի իշխանության
տապալումն:

2. Պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրա-
տական դիկտատուրայի հաստատումն խորհուրդների
հիմքի վրա:

3. Ազգային լիակատար անկախություն և պե-
տական միավորումն:

4. Պետական պարտքերի վոչնչագումն:

5. Իմպերիալիստներին պատկանող խոշոր ձեռնարկությունների (արդյունաբերական, տրանսպորտային, բանկային և այլն) աղքավնագումն:

6. Կալվածատիրական, յեկեղեցական և վանքապատկան հողի գրավումն. Ամբողջ հողի ազգայնացում.

7. Տամայա բանվորական ոռ մտածելու...

8. Բանվորակառագիտական հեռական

Նակի կազմակերպություն:

Հետագա պայքարի ուսուառաւն.

համեմատ (բուրժուազիայի սաբուտաֆը, բուրժուազիացի այդ խավերին պատկանող ձեռնարկությունների գրավումն, վոր անխուսափելիորեն վերածվում է խոշոր արդյունաբերության ազգայնացման) այն գաղութներում և կիսագաղութներում, վորտեղ պըրուետարիատը խաղում է զեկավարի և հեգեմոնի դեր, հետևողական բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը կը- վերածի պըրուետարիատի հեղափոխության: Այն գա- ղութներում, վորտեղ չկա պըրուետարիատ, իմպերիա- լիստների իշխանության տապալումը պետք է նշանա- կի ժողովրդական (գյուղացիական) խորհուրդների իշ- խանության կազմակերպում, ոտարերկրյա ձեռնարկու- թյունների և հողերի գրավումն ու նրանց հանձնումը պետութան ձեռքբ:

Իմպերիալիզմի գեմ մզվող պայքարի տեսակետից, բանվոր դասակարգի կողմից իշխանությունը նվաճելու տեսակետից գաղութային հեղափոխություններն ու ազգային-ազատագրական շրթումները՝ խաղում են ահագին գեր: Գաղութներն ու կիսագաղութները նշանակություն ունեն փոփանցական շրջանում:

նաև այն պատճառով, վոր համաշխարհային քաղաքի գեր խաղացող ինգուստրիալ յերկրների վերաբեր- մամբ նրանք խաղում են համաշխարհային գույղի գեր, կե համաշխարհային սոցիալիստական տնտեսությա ազմակերպման, ինդուստրիայի և գյուղատնտեսու- թյան նիշտ զուգակցության խնդիրը նշանավոր չա- փով իմպերիալիզմի նախկին գաղութների նկատմամբ ցուցահանվող վերաբերմունքի ինդիրն ե։ Ուստի յեղ- բայրական մարտական դաշինքը, վոր պետք է կնեմի գաղու- թային աշխատավորական մասսաների հետ, ամենազիա- վոր խնդիրներից մեկն է համաշխարհային ինդուստրիալ պրոլետարիատի համար, վորպես ինպերիալիզմի դեմ ու- ղրոված պայքարի հեղեղունի յեվ դեկապարի։

Այսպիսով, մետրոպոլիաների բանվորներին պայշտարի հանելով պըոլետարիատի դիկտատուրայի համար, համաշխարհային հեղափոխության ընթացքը հանում և նմանապես հարցուր միլիոնավոր գաղութային բանվորների և գյուղացիների՝ պայքարելու ուսարեթակայական կեմ: Սոցիալիզմի կենտրոնների—հանձինս խորհրդային հանրապետությունների և նըրանց տնտեսական աճող ուժի առկայության պայմաններում, իմպերիալիզմից անջատված գաղութները անտեսապես մոտենում են և աստիճանաբար միավորվում համաշխարհային սոցիալիզմի ինդուստրիալ ոչախների հետ, ներդրապավում սոցիալիստական շինարարության հունի մեջ, մի կողմ թողնելով կապիտալիզմի, վորպես տիրապետող սխառեմի, հետագա զարգացման փուլը, և ստանում են տնտեսական ու կուլտուրական արագ պըողքեսաի հնարավորությունն Քաղաքականապես խըմբավորվելով պըոլետարական դիկտատուրայի կենտրոնա-

ների շուրջը, նախկին հետամնաց գաղութների գյու-
ղացիական խորհուրդները և բանվորների ու գյուղացի-
ների խորհուրդներն ավելի զարգացած տիպի նախկին
գաղութներում ներառվում են խորհրդավիճ հանրապե-
տությունների շարունակ աճող ֆեղերացիայի ընդհա-
նուր սիստեմի մեջ և, հետևաբար, գրանով իսկ պըոլե-
տարիատի համաշխարհային դիկտատորայի սիստեմի
մեջ։ Սոցիալիզմի՝ վորպես արտադրության նոր յե-
ղանակի՝ զարգացումն ստանում և իր համաշխարհա-
յին թափը։

V. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՆ ԽՍՀՄ ՅԵՎ ՄԻ-
ԶԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Սոցիալիզմի ժինարարությունը ԽՍՀՄ յեվ գասա-
կարգային կոփքը

Կապիտալիստական սիստեմի խորպագույն կրիզի-
սի հիմնական արտահայտությունն ե համաշխարհային
տնտեսության պառակտումն կապիտալիզմի յերկըր-
ների և կառուցվող սոցիալիզմի յերկըրների։ Ուստի
պըոլետարական դիկտատորայի ներքին ամրապնդումն
ԽՍՀՄ, սոցիալիստական շինարարության հաջողու-
թյունները, ԽՍՀՄ ազգեցցության և հեղինակության
աճումը գաղութների պըոլետարական մասսաների և
ճնշված ժողովուրդների մեջ նշանակում են միջազգա-
յին սոցիալիստական հեղափոխության շարունակությունն,
ուժեղացումն ու ծավալումն։

Յերկըրում ունենալով անհրաժեշտ և բավականա-
չափ նյութական նախագրյալներ վոչ միայն կալվա-
ծատերներին ու բուրժուազիային տապալելու համար,
այլ և լիակատար սոցիալիզմ կառուցելու համար, խոր-
հըրդային հանրապետությունների բանվորները մի-
ջազգային պըոլետարիատի ոգնությամբ հերոսաբար
յետ մղեցին ներքին և ոտարերկրյա հականեղափոխու-
թյան զինված ուժերի հարձակումը, ամրապնդեցին
իրենց գաշինքը գյուղացիության հիմնական մասսա-

ների հետ և խոշոր հաջողությունների հասան սոցիալստական շինարարության բնագավառում:

Պրոլետարական սոցիալիստական արդյունաբերության այն կապը զյուղացիական մանր տնտեսության հետ, վորն ապահովում է և գյուղատնտեսության արտադրողական ուժերի աճումը և սոցիալիստական արդյունաբերության առաջնորդող դերը. այդ արդյունաբերության զողումը զյուղատնտեսության հետ, այն արդյունաբերության, վորը կապիտալիստական յեղանակով սպասարկում եր մակարուծական գաղաքաբերի անարտադրողական սպասմանը. արտադրություն վոչ թե կապիտալիստական շահույթի համար, այլ մասսայական պահանջների բավարարման, այդ վերջինների արագ զարգացման պայմաններում, մի բան, վոր վերջին հաշվով մեծ չափերով խթանում է արտադրական ամբողջ պրոցեսսը. վերջապես, աղնատեսական իշխող բարձունքների մեծագույն կոնցենտրացիան պրոլետարական պետության ձեռքում, պլանավորության աճող տարրերը և դրա հետ կապված՝ արտադրության միջոցների խնայողությունն ու ամենից նպատակահարմար բաշխումը, — այս ամենը հնարավորություն և տալիս պրոլետարիատին արագ առաջ շարժվելու սոցիալիստական շինարարության ուղիղով:

Բարձրացնելով վողջ ժողովրդատնտեսության արտադրողական ուժերը, անշեղորեն կիրառելով ԽՍՀՄ ինդուստրիացման կուրս, ինդուստրիացման, վորի արագ տեմպը թելադրվում է միջազգային և ներքին, բուլոր պարագաներով, ԽՍՀՄ պրոլետարիատը, չնայած կապիտալիստական պետությունների կողմից նրան

ֆինանսականտնտեսական բոլորակելու սիստեմատիկորեն կրկնվող փորձերին, միևնույն ժամանակ բարձրացնում է ժողովրդատնտեսության հանրայնացրած (սոցիալիստական) հատվածի տեսակարար կը շիռը թե ըստ ամբողջ յերկրի արտադրության միջոցներում ունեցած բաժնի և թե ըստ այն բաժնի, վորնա ունի յերկրի ընդհանուր արտադրանքի և ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ: Այսպիսով, պետական սոցիալիստական արդյունաբերությունը, աղըսանսպորտն ու բանկային սիստեմը պետական առևտորի և արագորեն աճող կոռպերացիայի լծակների միջոցով — հողի ազգայնացման և յերկրի ծավալվող ինվուտարիալիզացիայի առկայության պարագայում — ավելի և ավելի յեն իրենց յետելից տանում զյուղացիների մանր և մանրագույն տնտեսությունները:

Գյուղատնտեսության բնագավառում հատկապես՝ արտադրողական ուժերի վերելքը կատարվում է այնպիսի պայմաններում, վորոնք սահմանափակում են զյուղացիության շերտավորումը (հողի ազգայնացումը և, հետեւապես, հողամասերի տուրեալի արգելումն, խիստ-պրոցեսսիվ հարկերի կիրարկումն, չքավորամիջակների կոռպերացիայի և չքավորամիջակների արտադրական միավորումների ֆինանսավորումը, ուրինազբությունը վարձու աշխատանքի մասին, կուլակներին մի շարք քաղաքական և հասարակական իրավունքներից զրկելը, չքավորության հատուկ կազմակերպումն և այլն): Սակայն այն չափով, ինչ չափով սոցիալիստական ինդուստրիալի արտադրողական ուժերը գեռնես չեն աճել այնքան, վոր լայն մասշտաբով տիխնիկական նոր բազիս ստեղծեն գյուղատնտեսություն, ինտերն. Ծրագիրը — 4

սության մեջ և գրանով իսկ անհապաղ իրագործեն գյուղացիական տնտեսությունների արտադրական աշխագ միավորումը հասարակական խոշոր տնտեսությունների (կոլեկտիվ տնտեսությունների) մեջ, վորոշ չափով աճում ե և կուլակությունը, վոր տնտեսական ու այնուհետև նմանապես քաղաքական զոգումն և հաստատում այսպես կոչված «նոր բուրժուազիայի» տարրերի հետ:

Իր ձեռքում ունենալով տնտեսական իշխող վճռողական բարձունքները, սիստեմատիկորեն վտարելով մասցորդները քաղաքային մասնավոր կապիտալի, վորի բաժինը չափազանց խիստ ընկել և «տընտեսական նոր քաղաքականության» վերջին շրջանի ընթացքում՝ ամեն կերպ սահմանափակելով գրութիշահագործողական շերտերը, վորոնք առաջանում են ապրանքա-փողային հարաբերությունների զարգացման հողի վրա. սատարելով գյուղում խորհրդային տնտեսություններին և ծավալելով նրանց նոր շինարարությունը. հասարակ ապրանքարտադրող-գյուղացիների հիմնական մասսաները ներգրավելով խորհրդային տնտեսական կազմակերպության ընդհանուր սիստեմի մեջ և, հետեւապես, սոցիալիստական շինարարության գործի մեջ արագորեն առաջադիմող կոոպերացման միջոցով, վոր պրոլետարական գիլտատուրայի և սոցիալիստական ինդուստրիալի դեկավորության պայմաններում նույնանում և սոցիալիզմի զարգացման հետ. վերականգնման պրօցեսսից անցնելով յերկրի մերող արտադրական-տեխնիկական հիմքի ընդլայնված վերարտադրության, — ԽՍՀՄ պրոլետարիատն իր առջե դնում ե և արգեն սկսում իրագործել

իուշոր կապիտալ շինարարության խնդիրը (առհասարակ արտադրության միջոցների արտադրությունը, մասնավորապես և առանձնապես ծանր արդյունաբերությունն ու եկատրիֆիկացիան) և վաճառականական, գնողական ու գարկալին կոոպերացիայի հետագա զարգացման հետ միասին գլուղացիության անմիջականութեն արտադրական և ընդդմին ավելի ու ավելի մասսայական կոոպերացման խնդիրը — կոոպերացում կոլեկտիվմի բազայի վրա — մի բան, վոր պահանջում ե նյութական հոգոր սատարումն պլութարական պետության կողմից:

Այսպիսով, արգեն հանդիսանալով վճռական տընտեսական ուժ, վորով հիմնականում վորոշվում ե եկոնոմիկայի ամբողջ զարգացումը ԽՍՀՄ, սոցիալիզմը գրանով իսկ իր զարգացման մեջ անում ե հետագա խոչոր քայլերը, սիստեմատիկորեն հաղթահարելով յերկրի մանր-ըուրժուական ընուլթից բղիող և դասակարգային հակասությունների ժամանակավոր սրման շրջանների հետ կապված գծվարությունները:

Արդյունաբերության վերասարքավորման անհրաժեշտությունը, խոչոր կապիտալ շինարարության անհրաժեշտությունը չեն կարող չառաջացնել միշարք խորագույն դժվարություններ սոցիալիստական զարգացման ձանապահին, վորոնք վերջին հաշվով բացարկում են յերկրի տեխնիկա-տնտեսական հետամացությամբ և նրա ավերմամբ՝ իմալերիալիստական և քաղաքացիական պատերազմների տարիների ընթացքում:

Սակայն, չնայած դրան, բանվոր դասակարգի և աշխատավորական լայն մասսաների կենսական մա-

կարգակը բարձրանում ե անընդհատ և սոցիալիստական ռայիշոնալիզացիայի ու արգվունաքերության գիտական կազմակերպման հետ միասին աստիճանաբար մտցվում ե յոթմամյա բանվորական որ, մի բան, վոր բացում ե բանվոր դասակարգի աշխատանքի, կյանքի և կենցաղի պայմանների բարելավման համար հետագա հեռանկարներ:

Հիմունք ունենալով ԽՍՀՄտնտեսական աճումը, սոցիալիստական հատվածի աեսակարար կշռի անընդհատ բարձրացումը, վոչ մի բոպե չզարգարեցնելով պայքարն ընդգեմ կուլակության, գյուղում հենվելով չքափորության վրա և հաստատուն գաշինք ունենալով զյուղացիության հիմնական միջակ մասսաների հետ, բանվոր դասակարգը՝ հեղափոխական ճակատամարտերում մարզված կոմմունիստական կուսակցության զեկավարությամբ միավորված՝ սոցիալիստական շինարարության գործի մեջ ե ներգրավում տասնյակ միլիոնավոր աշխատավորների ավելի և ավելի լայն մասսաներ: Դրա հիմնական միջոցներն են՝ մասսայական լայն կազմակերպությունների զարգացումը (կուսակցությունը վորապես զեկավար ուժ, արհեստակցական միությունները վորապես պրոլետարական դիկտատուրայի ամբողջ սիստեմի վողնաշարը, կոմիերիամիությունը, բոլոր տեսակների կոոպերացիան, կանանց, բանվորուհիների և գեղջկուհիների կազմակերպությունները, զանազան տեսակի այսպիս կոչված «կամավոր ընկերությունները», բան. և գյուղթղթակիցների, սպորտային, գիտական, կուլտուր-լուսավորական կազմակերպությունները), մասսաների նախաձեռնության ամենակերպ քոչալերումն, բանվորների նորա-

նոր շերտերի առաջքաշումն իշխող պոստերի համար անտեսության ու կառավարման բոլոր բնագավառներում:

Պրոլետարիատի անմիջականորեն կառավարող կաղըային շերտի բյուրոկրատական վոսկրացման կամ սոցիալական վերասերման գեմ գլխավոր բերաշխիքներից մեկը հանդիսանում են՝ մասսաների անընդհատ ներգրավումը սոցիալիստական շինարարության պրոցեսի մեջ, պիտական-տնտեսական, արհեստակցական և կուսակցական ամբողջ ապահարատի շարունակական թարմացումը նորանոր պրոլետար աշխատավորներով, բարձրագույն դպրոցներում, մասնագիտական կուրսերում շինարարական բոլոր ձյուղերի համար սոցիալիստական նոր կադրերի սիստեմատիկ նախապատրաստումն՝ առհասարակ բանվորներից, առանձնապես բանվոր յերիտասարդությունից:

2. ԽՍՀՄ Եռանակությունը լեզ երա միջազգային— հեղափոխական պարտականությունները

Զախշախելով սուսական իմակերիալիզմն ու ազատագրելով ցարական կայսրության բոլոր նախկին գաղութներն ու ձնշված ազգերը. սիստեմատիկորեն ըստեղծելով նրանց կուլտուր-քաղաքական զարգացման հաստատուն բաղիսը համապատասխան յերկրամասերի ինդուստրիացման միջոցով. Միության պետական սահմանադրության մեջ ամրապնդելով ավտոնոմ մարզերի, ավտոնոմ հանրապետությունների և դաշնակից հանրապետությունների իրավական դիրքը և լիովին իրացնելով ազգերի ինքնորոշման իրավունքը, —պրոլետարիատի գիկտատուրան ԽՍՀՄ դրանով իսկ ապահո-

վում և Միության զանազան ազգությունների վոչ միայն ձևական, այլ և փաստական հավասարությունը:

Հանդիսանալով պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության յերկիր, բանվոր դասակարգի ահազին նվաճումների յերկիր, բանվորների և գյուղացիների գաշինքի յերկիր, նոր, մարքսիզմի դրոշակի տակ ընթացող, կուլտուրայի յերկիր, ԽՍՀՄ անխուսափելիորեն դառնում և բոլոր ճնշված դասակարգերի համաշխարհային շարժման բազա, միջազգային հեղափոխության ոջախ, համաշխարհային պատմության մեծագույն գործոն: ԽՍՀՄ մեջ համաշխարհային պրոլետարիատն առաջին անգամ գտնում ե իրոք իր հայրենիքը, գաղութային շարժումների համար նա դառնում և մեծագույն ձգողության կենտրոն:

Այսպիսով կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի պայմաններում ԽՍՀՄ մեծագույն գործոն ե հանդիսանում վոչ միայն այն պատճառով, վոր նա դուրս ե յեկել կապիտալիստական համաշխարհային սիստեմից, տնտեսության նոր, սոցիալիստական սիստեմի հիմք ստեղծելով, այլ և այն պատճառով, վոր նա առհասարակ խաղում ե բացառիկ ահազին հեղափոխական դեր, դերը պրոլետարական հեղափոխության միջազգային շարժիչի, վոր հրում ե բոլոր յերկրների պրոլետարերին գեպի իշխանության գրավում. այն բանի կենդանի որինակի գեր, վոր բանվոր դասակարգն ընդունակ և վոչ միայն կործանելու կապիտալիզմը, այլ և կառուցելու սոցիալիզմը. նախապատկերի գերը յեղբարական փոխհարաբերությունների, գորոնք պետք ե հաստատվեն պետական իշխանությունը նվաճած համաշխարհային պրոլետարիատի կողմից բոլոր յերկրնե-

րի ազգությունների միջև Յերկրագնդի Խորհրդարակին Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմաններում և նախապատկերի դեր բոլոր յերկրների աշխատավորների տնտեսական միավորման համար սոցիալիզմի համաշխարհային միասնական տնտեսության մեջ:

Տնտեսության յերկու սիստեմի միաժամանակյա գոյացությունը—սոցիալիստական սիստեմի՝ ԽՍՀՄ և կապիտալիստական սիստեմի՝ մնացած յերկրներում—պրոլետարիատի պետության առաջ դնում և կապիտալիստական աշխարհի կողմից տեղացող հարվածները (բոյկոտ, բլոկադա և այլն) յետ մղելու խնդիրը և դրա հետ միասին տնտեսական մանցովըներ կատարելու և կապիտալիստական յերկրների հետ ունեցած տնտեսական կապերն ոգտագործելու խնդիրը (արտաքին առևտություն կազմակերպության ոգնությամբ, վորպիսի առևտություն հանդիսանում և սոցիալիզմի հաջող կառուցման հիմնական պայմաններից մեկը, վարկերի, փոխառությունների, կոնցեսիաների ձևով և այլն): Գլխավոր և հիմնական գիծն այսուղ պետք ե վենի արտասահմանի հետ ըստ հնարավորության ավելի լայն կապեր հաստատելու գիծը, բայց ԽՍՀՄ համար նրանց ոգտակետ լինելու սահմաններում, այսինքն առաջին հերթին ինդուստրիալի ամրապնդման համար իր իսկ ԽՍՀՄ մեջ, սեփական ծանր արդյունաբերության ու ելեկտրիֆիկացիայի բազա ստեղծելու, վերջապես, սեփական սոցիալիստական մեքենաշինարարության համար: Միայն այն չափով, վոր չափով ապահովում ե ԽՍՀՄ այս տնտեսական ինքնուրունությունը կապիտալիստական շրջապատման պայմաննե-

ԾԽԱՅ, ստեղծվում ե հաստատուն յերաշխիք ԽՍՀՄ կա-
պարզող սոցիալիստական շինարարության կործան-
ման և ԽՍՀՄ համաշխարհային կապիտալիստական
սիստեմի կցորդը դարձնելու վատանսկ ռեալ:

Մյուս կղզմից կապիտալիստական պետությունները, չնայած նրանց շահազգը ըստ թյանը ԽՍՀՄ շուրջ կաների նկատմամբ, շարունակ տատանվում են առետրի շահերի և ԽՍՀՄ աճման հանդեպ ունեցած վախի միջե, մի աճում, վոր միջազգային հեղափոխության աճում են նշանակում: Սակայն իմակերիալիստական պետությունների քաղաքականության մեջ զլիսավոր և հիմնական տեսքենց հանդիսանում են ԽՍՀՄ արջապատելու և նրա գեմ հականեղափոխական պատերազմուկը տեսքենց հանդենցը՝ նրան խեղդելու և համաշխարհային բուրժուական տերրորիստական ռեժիմ ստեղծելու նը-պատակով:

ԽՍՀՄ քաղաքական շրջապատման յենթարկելու
այս սիստեմատիկ փորձերն իմպերիալիզմի կողմից և
ռազմական հարձակման աճող փառնոցը չեն խանգարի
ԽՍՀՄ մեջ պրոլետարական դիկտատուրան դեկավարող
ՀԿ (բ.՝)Կ-Կոմ, Խնտերնացիոնալի սեկցիալին-իր մի-
ջազգական պարտականությունները կատարել և սա-
աւարութիւն ցուց տալ բոլոր ճնշվածներին, կապիտալիս-
տական յերկրների բանվորական շարժման, — սա-
տարութիւն գաղութային ժողովությների շարժման ընդ-
դեմ իմպերիալիզմի, սատարութիւն աղջային վորեւե ձեւի
ճնշվան դեմ սղվող պայքարին:

**3. Միջազգային պրոլետարիատի պարականությունը-
ները ԽՍՀՄ վերաբերմամբ**

Իր կողմից միջազգային պլրութարկատը, վոր ի դեմս ԽՍՀՄ ունի իր միակ հայրենիքը, իր նվաճումների կարևորագույն պատվարը և իր միջազգային ազատագրման ամենաագլուսավոր գործոնը, պարտական և նպաստել ԽՍՀՄ մեջ կատարվող սոցիալիստական շինարարության հաջողություններին և բոլոր միջոցներով պաշտպանել նրան կապիտալիստական յերկրների հարձակումից:

«Համաշխարհային քաղաքական պարագաները
այժմ որպահ հերթի յեն դրել պրոլետարիատի ղիկտա-
տուրան, և համաշխարհային քաղաքականության բոլոր
անցքերն անխուսափելիորեն սեռվում են մեկ կենտ-
րոնական կետի շուրջը, այն և՛ մուսաստանի Խորհրդ-
դային Հանրապետության գեմհամաշխարհային բուր-
ժուազիայի կողմից մղվող պարագի, և Խորհրդային
հանրապետությունը պետք է անհրաժեշտորեն իր շուրջը
համախմբի, մի կողմից—բոլոր յերկրների սուս-
չակոր բանվորների խորհրդային շարժումները, մյուս
կողմից—գաղութների և ձնշված ազգությունների բո-
լոր ազգային ազատազրական շարժումները» (Լենին):

ԽՍՀՄ վրա իմպերիալիստական պետությունների հարձակման և նրա գեմ պատերազմ սկսելու դեպքում միջազգային պրոլետարիատը պետք է պատասխանի ամենահամարձակ և վճռական մտսաբական բելություններով և իմպերիալիստական պետությունները տապալելու պայքարով, լողունդ ունենալով պրոլետարիատի դիկտատուրան ու դաշինքը ԽՍՀՄ հետ:

Գաղութիներում, մանավանդ ԽՍՀՄ վրա հարձակ-
վող իմպերիալիստական լերկրի գաղութներում անհրա-
ժեշտ ե ողտագործել իմպերիալիզմի ռազմական ուժե-
րի յետ քաշումը նրանց բուն նպատակից, վրբանդի
մաքսիմում ջանքեր թափվեն հակախիմպերիալիստական
պայքար ծավալելու և հեղափոխական լելույթներ կազ-
մակերպելու համար:

Սոցիալիզմի զարգացումը ԽՍՀՄ և նրա միջազգային ազգեցության աճումը վոչ միայն նրա դեմ մուբլիլիզմայի և անում կապիտալիստական պետությունների և նրանց սոցիալ-դեմոկրատական գործակալության ատելությունը, այլև մեծազույն համակրանքներ են արթնացնում նրա վերաբերմաքր ամբողջ աշխարհի աշխատավոր լայն մասսաների կողմաց, բոլոր լերկը ների ճնշված դասակարգերի պատրաստակամությունը՝ բոլոր միջոցներով մարտնչելու պրոետարիատի գիշտատուրայի լերկը համար իմպերիալիստական հարձակման զեղքում։ Այսպիսով ժամանակակից համաշխարհային տնտեսության հակասությունների ծավալումը, կապիտալիստական ընդհանուր կրթիսի զարգացումը, ինպերիալիստների ռազմական հարձակումը Խորհրդային Միության վրա անխուսափելիորեն կառուչացնեն հեղափոխական հղոր պայմաններում, վորը պետք ե թաղե կապիտալիզմը մի շարք այսպես կոչված քաղաքակիրթ լերկը ներում, հաղթական հեղափոխության հրահրե գաղութներում, ահազին չափով լայնացնե պրոլետարական դիկտուրայի բազան և դեպի սոցիալիզմի վերջնական համաշխարհային հաղթանակը։

VI. ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍՏՐՈՒ-
ԳԻԱՆ ՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՍՈՒ-
ՐԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՌՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

**1. Կոմմունիզմին թենամի իգեղողոգիաները բանվոր
զասակարգի մեջ**

Պրոլետարիատի դիկտատուրայի համար կապի-
տալիզմի դեմ մղած իւս պայքարում հեղափոխական
կոմմոնիզմը հանդիպում է բանվոր դասակարգի մեջ
գոյություն ունեցող բազմաթիվ հոսանքների, վորոնք
արտահայտում են պրոլետարիատը իմպերիալիստական
բուրժուազիային իդեոլոգիապես ավելի կամ պակաս
չափով յենթարկելու աստիճանը կամ արտացոլում են
մանր բուրժուազիայի և քաղքենիության իդեոլոգիա-
կան ճնշումը նրա վրա, այն խավերի, վորոնք ժամա-
նակ՝ առ ժամանակ ապրուամբում են ֆինանսական կա-
պիտալի շղթայական ոեթիմի դեմ, բայց ընդունակ
չեն պայքարի հետևողական գիտականորեն մտածված
ստրատեգիայի ու տակտիկայի և այդ պայքարն անց-
կացնելու կազմակերպված յեղանակով, պրոլետարիա-
տին հատուկ դաժան դիսցիպլինով:

իմպերիալիստական պետության հաճգին սոցիա-
լական հզորությունը, այդ պետության բոլոր ոժան-
դակ ապագաբաններով հանդերձ—դպրոցով, մամուլով,
թատրոնով, յեկեղեցով—նախ և առաջ արտահայտվում
ե բանվոր դասակարգի շրջանում գոյություն ունեցող
կոնֆեսիոնալ յեզ ուժությունիստական հոսանքներով,

վորոնք ներկայացնում են ամենագլխավոր խոչընդուռը պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխության ճանապարհին:

Կոնֆեսսիոնալ, կրոնականորեն - գունավորված ուղղությունները բանվոր դասակարգի շրջանում՝ իւրենց արտահայտությունն են գտնում կոնֆեսսիոնալ արհեստական միուրյունների մեջ, վրոնք համախ անմիջապես կապված են բուրժուազիայի համապատասխան քաղաքական կազմակերպությունների հետ և հարում են տիրապետող դասակարգի այս կամ այն յեկեղեցական կազմակերպությանը (կաթոլիկ արհեստական միություններ, յերիտասարդության քրիստոնեական միություններ հրեական սիոնիստական կազմակերպություններ և այլն):

Լինելով պրոլետարիատի վորոշ խավերի իդեոլոգիական գերության ամենավառ արդյունքը, այս բոլոր հոսանքները մեծ մասամբ կրում են ոռմանտիկական-ֆեոդալական գունավորում: Կրոնի սուրբ ջրով սըրբագործելով կապիտալիստական սեժիսի բոլոր նողկալի յերեսությները և իրենց հոտին ահաբեկելով անդրշերիմյան պատիճների ուրվականներով, այդ կազմակերպությունների ղեկավարները դասակարգացին թըշնամու ամենառեակցիոն ջոկատներն են հանդիսանում պրոլետարիատի բանակում: Պրոլետարիատը բուրժուազիայի իդեոլոգիական աղդեցությանը յենթարկելու առևտրական-ցինիկ և աշխարհիկ-իմպերիալիստական ձև հանդիսանում է ժամանակակից «սոցիալիստական» ոեթորմիզմը: Իր հիմնական պատվիրաններն արտադրելով իմպերիալիստական քաղաքականության տախտակներից, նաև ներկայումս ունի իր տիպարը հան-

ձին գիտակցաբար հակասոցիալիստական և բացահայտ հականեղափոխական «Աշխատանքի ամերիկական ֆեղերացիալին»: Ամերիկյան լաքելական արհբլուրոկրատիայի «գաղափարացին» դիկտատուրան — այն արհբլուրոկրատիայի, վորոն իր հերթին արտահայտում է ամերիկյան դոլարի «գաղափարացին» դիկտատուրան — անդիլական ոեփորմիզմի և նրա արքայական սոցիալիստների՝ բանվորական կուսակցության անդամների միջոցով գարձավ ամբողջ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի և Ամստերդամի ինտերնացիոնալի լիդերների թեորիայի ու պրակտիկայի կարևորագույն բաղկացուցիչ մասը, ընդ ոմին գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներն այդ թեորիաները գունավորում են մարքսիստական ֆրազաբանությամբ, գրանով քողարկելով իրենց լիակատար գավաճանությունը մարքսիզմին: Լինելով հեղափոխական կոմմունիզմի գլխավոր թշնամին բանվորական շարժման մեջ և կազմակերպչական լայն բաղադրությունների ու նրանց միջոցով ոեփորմիստական արհեստական միությունների մեջ, «սոցիալիստական» ոեփորմիզմն իր ամբողջ քաղաքականության և իր ամբողջ թեորիական դիրքավորման մեջ դրսեկում է իրեն, վորպես մի ուժ, վոր ուղղված ե պրոլետարական ենդափոխուրյան գեմ:

Արտաքին բաղաբականության բնագավառում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները «հայրենիքի պաշտպանության» գրոշակի տակ ակտիվ կերպով աշակեցեցին իմպերիալիստական պատերազմին: Իմպերիալիստական պետության եքսպանսիան ու «գաղութային քաղաքականությունը» նրանց կողմից գտնում

հն ամենակերպ սասարութիւն. որինտացիա իմակերիաւ լիստական պետությունների հականեղափոխական «Ազգայի Արքան Միության» («Ազգերի Լիդա»), «ուլորաշիմպերիալիզմի» քարոզը, մասսաների զորահավաքը կեղծ պացիֆիստական լոգունզներով և միենույն ժամանակ ակտիվ սատարութիւն իմպերիալիզմին նրա հարձակումների մէջ ԽՍՀՄ վրա և նրա ապագա պատերազմի մէջ ընդդեմ ԽՍՀՄ, ահավասիկ ռեֆորմիզմի արտաքին քաղաքականության հիմնական գծերը: Ներքին քաղաքականության բնագավառում սոցիալ-դեմոկրատիան իրեն նպատակ ե զրել ուղղակի աջակցությունն ու ուղղակի ոգնությունը կապիտալիստական ռեժիմին: Լիակատար սատարութիւն կապիտալիստական ռացիոնալիզացիային և կապիտալիզմի ստարիլիզացիան, գասակարգացին խաղողության, «արգունաբերության խաղաղության» ապահովութիւն. բանվորական կազմակերպությունները ձեռնարկատերերի և իմպերիալիստական ավագակային պետության կազմակերպություններին շաղկապելու քաղաքականությունը. այն այսպես կոչված «տնտեսական գեմոկրատիալի» պրակտիկան, փորն իրոք հանդիսանում ե տրեստալին կապիտալին լիովին յենթարկվելու պրակտիկա. խոնարհութիւն իմպերիալիստական պետության և մանավանդ նրա կեղծ գեմոկրատատական ցուցանակների տուած. այդ պետության որգանների ակտիվ շինարարությունը՝ նրա վոստիկանության, բանակի, ժանդարմերիայի, նրա զասակարգային դատարանի. այդ պետության պաշտպանությունը հեղափոխական կոմմոնիստական պրոլետարիատի ամեն մի հարձակումից և սոցիալ-դեմոկրատիայի դահճային դեր հեղափոխական կրիզիսների շրջաններում, — ահա-

վասիկ ռեֆորմիզմի ներքին քաղաքականության գիծը: Արհեստակցական պայքարը ձևացնելով, ռեֆորմիզմը տվյալ բնագավառում ևս իր գլխավոր խնդիրը համարում ե այդ պայքարի այնպիսի մղումը, վորն ապարում կապիտալիստների դասակարգը բոլոր և ամեն հովեր կապիտալիստներից և համենայն զեպս յերաշխավորեր տեսակի ցնցումներից և համենայն զեպս յերաշխավորեր կապիտալիստական սեփականության հիմունքների լիակատար անձեւում խելլությունը:

Թեորեալի բնագավառում սոցիալ-դեմոկրատիան դաշտածանել ե մարքսիզմին լիովին ու ամբողջապես, ռեվիզիոնիստական ետապով անցնելով գեղի կատարչալ լիբերալ-բուրժուալիստական ռեֆորմատորություն ու բացահայտ-իմպերիալիստիալիզմի՝ Մարքսի ուսմունքը կահայտ սոցիալ-իմպերիալիզմի Մարքսի ուսմունքը կապիտալիզմի հակասությունների մասին նա փոխարիւ պիտակիզմի հակասությունների մասին նա վերջինի ներգաշնակ զարգացման բուրժուալիստական նել ե վերջինի ներգաշնակ զարգացման բուրժուալիստական ուսմունքը. նա արխիվը ե նետել կրիզիսների և ուսմունքը. նա արխիվը ե նետել կրիզիսների և ուսմունքը. դասակարգությունների առջարգային խաղաղության գոեհիկ քարոզ. — ե դասակարգային խաղաղության գոեհիկ քարոզ. — դասակարգային հակասությունների սրման ուսմունքը նա փոխել ե կապիտալի «գեմոկրատացման» մասին նա փոխել ե կապիտալի «գեմոկրատացման» մասին ստեղծված քաղքենիստական ուռակի հետ. կապիտալիզմի որոք անխուսափելի պատերազմների թեորիակի որոք նախուսափելի պատերազմների թեորիական խարեւեղը նա դրել ե պացիֆիզմի բուրժուալիստական խաղաղությունն ու «ուլորաշիմպերիալիզմի» ստահող քարոզը. կապիտալիզմի հեղափոխական խորտակման բոլոր կապիտալիզմի հաղափոխական խորտակման թեորիան նա փոխանակել ե «առողջ» կապիտալիզմի կեղծ գրամի հետ, մի կապիտալիզմի, փոր խաղաղ կեղծ գրամի հետ, մի կապիտալիզմի, փոր խաղաղ կեղծ գրամի փոխարկվում ե սոցիալիզմի. նա ռեվոլուցիան (հեղափոխությունը) փոխարինել ե նվոյուցիան

ցիայով. բուրժուական պետության կործանումը—նրա ակտիվ շինարարությամբ. պլուետարական դիկտատուրայի ուսմունքը—բուրժուազիայի հետ կոալիցիա կնքելու թեորիայով. պրոլետարական միջազգային համերաշխության ուսմունքը—իմպերիալիստական հայրենիքի պաշտպանության ուսմունքով. Մարքուի դեւեկտիկական մատերիալիզմը—իդեալիստական փիլիսոփայությամբ և բուրժուազիայի կրոնական թափթփուկների հետ սեթեկթելով:

Այդ սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիզմի ներսում աչքի յեն ընկնում մի շարք ուղղություններ, վորոնք առանձնապես բնորոշ են սոցիալ-դեմոկրատիայի բուրժուական այլասերման տեսակետից:

Կոնսրույտիվ սոցիալիզմը (Մակդոնալդ և ընկ.), վոր իր անվան մեջ իսկ կրում է պրոլետարիատի հեղափոխության գեմ պայքարելու և կապիտալիստական կարգի նկատմամբ դրական վերաբերմունքի գաղափարը, շարունակում է ֆաբրիականության (Վերբ առուսիններ, Բ. Շոու, Լորդ Ուիլյամ և այլն) լիբերալ-մարդասիրական, հականեղափոխական և բուրժուական ավանդությունները: Ակզրունքորեն ժխտելով պրոլետարիատի դիկտատուրան և պայքարի բռնական միջոցներն ընդգեմ բուրժուազիայի, նաև սատարում են բռնական պայքարին ընդգեմ պրոլետարիատի և գաղութային ժողովուրդների: Կապիտալիստական պետության ջատագովը լինելով, սոցիալիզմի անվան տակ քարոզելով պետական կապիտալիզմ՝ յերկրագնդի յերկու մասերի իմպերիալիզմի ամենազոհեհիկ իդեոլոգների հետ միասին դասակարգային թեորիան հայտարարելով «նախագիտական» թեորիա. «կոն-

ստրուկտիվ սոցիալիզմը» խուզով քարոզում ե աղ-գայնացման չափավոր ծրագիր հետզնումով, հողային մենտայի հարկում, ժառանգությունների և գերշահութիւնի հարկումն վորպես կապիտալիզմի վոչնչացման հույթի հարկումն վորպես կապիտալիզմի գիշտատումից: Լինելով ԽՍՀՄ պլուեկտարիատի դիկտատումից: Լինելով «կոնստրուկտիվ սոցիալիզմը» բուրժուազիայի հետ լիովին դաշնակցած՝ ակտիվ թշնամին և հանդիսանում պրոլետարիատի կոմմունիստական շարժման և գաղութային հեղափոխությունների:

«Կոնստրուկտիվ սոցիալիզմի» առանձին տեսակն և հանդիսանում «կոոպերատիզմ» կամ «կոոպերատիվ սոցիալիզմը» (Շարլ Ժիր, Տոտոմյանց և ընկ.), վորը նույնական վճռականորեն մերժում ե դասակարգային կափը և սպառողների կոոպերատիվ կազմակերպությունը քարոզում, վորպես միջոց խաղաղ կերպով հաղթահարելու կապիտալիզմը, իրոք ամեն կերպ ամրապնդմանը: Ի դեմս սպառողաջակելով նրա ամրապնդմանը: Ի դեմս սպառողաջական կոոպերացիայի մասսայական կազմակերպությունների պրոպագանդիստական ընդարձակ ապահարատուններով լայն մասսաների վրա ամենորյա սիստեմիկ ներգործություն անելու համար, «կոոպերամատիկ ներգործություն անելու համար, ամսական տիզմը» անողոք պայքարը և մղում հեղափոխական բարժանական շարժման դեմ, խոչընդոտ հանդիսանարկութական շարկութական իրադարձմանը, և այժմ ներլով նրա նպատակների իրագործմանը, և այժմ ներկայացնում ե ամենաակտիվ գործոններից մեկը ուղարկության հեղափոխության բանակում:

Այսպես կոչված «գիլիլիական սոցիալիզմը» (Պետի, Որաժ, Հոբսոն և ուրիշները) եկեկտիկ փորձ և տի, Որաժ, Հոբսոն և ուրիշները եկեկտիկ փորձ և տի, հանդիսանում միավորելու «հեղափոխական» սինդիկատականում

կալիզմը բուրժուալիբերալ ֆարիականության հետ,
անարխիստական ապակենտրոնացումը («ազգային
արդյունաբերական գիլդիաներ») պետական-կապիտա-
լիստական կինոտոնացման հետ, միջնադարի արհես-
տալին համբարային սահմանափակությունը ժամանա-
կակից կապիտալիզմի հետ:

Յենելով «աշխատավարձի սիստեմի» վոչչացման
բառային պահանջից, վորպես «անբարոյական» հաստա-
տության, վորը պետք է վերացվի արդյունաբերու-
թյան վերաբերմամբ զործադրվելիք բանվորական վե-
րահսկողությամբ, գիլդիական սոցիալիզմը միանգա-
ման անգիտանում և կարեռագույն խնդիրը, իշխա-
նության խնդիրը: Զգտելով միավորել բանվորներին,
ինտելլիգենտներին և տեխնիկներին ազգային արդյու-
նաբերության «գիլդիաների» ֆեդերացիայի մեջ և այդ
գիլդիաները խաղաղ ճանապարհով («վերահսկողու-
թյունը ներսից») դարձնել արդյունաբերության կա-
ռավարման որգաններ բուրժուական պետության շըր-
ջանակներում, գիլդիական սոցիալիզմի իրոք պաշտ-
պանում և այդ պետությունը, մթագնում և նրա դա-
սակարգային, իմպերիալիստական, հակալըրոկտարա-
կան բնույթը և նրան հատկացնում «սպառողների»
շահերի «արտապասակարգային» ներկայացուցչի տեղ,
վորպես գիլդիաներում կազմակերպված «արտապրոդ-
ների» հակակորի: Քարոզելով «Փունկցիոնալ գեմո-
կրատիա», այսինքն կապիտալիստական հասարակու-
թյան դասակարգերի ներկայացուցչությունն, վորոնք
պատկերացվում են վորպես պրոֆեսուաներ իրենց
հասարակական արտադրական հատուկ ֆունկցիա-
ներով՝ գիլդիական սոցիալիզմը ճանապարհ և բացում

ֆաշիզմի «կորպորատիվ պետության» համար: Բացա-
սելով պարլամենտարիզմն ու միենույն ժամանակ բա-
ցանով «ուղղակի գործողությունը», գիլդիական սո-
ցիալիստների մեծամասնությունը բանվոր դասակար-
գին դատապարտում և լիակատար անգործության և
պասսիվ լինթարկման՝ բուրժուազիային: Այսպիսով,
նա ներկայացնում է լուրատեսակ տրեգ-յունիստա-
կան ուստոպիտական ոպպորտյունիզմ և, վորպես այդպի-
սին, չի կարող չխաղալ հականեղագործական գեր:

Սոցիալ գեմոկրատական ոեփորմիզմի հատուկ
ձև և հանդիսանում, վերջապես, ալյուրամարքսիզմը: Լի-
նելով սոցիալ-դեմոկրատիայի «Ճախ» թեկ բաղկա-
ցուցիչ մասը՝ պատրամարքսիզմը ներկայացնում է
աշխատավոր մասսաների խարելության ամենից նուրբ
ձևը:

Պառնկելով մարքսիստական տերմինաբանությունը
և միենույն ժամանակ վճռականորեն իր կապը իզե-
լով հեղափոխական մարքսիզմի հիմունքներից («ավա-
տրամարքսիստների» կանտիվականությունը, մախիզմը
և այլն փիլիսոփայության բնագավառում), սեթեկթե-
լով կրոնի հետ, անգլիական ոեփորմիստաներից ար-
տագրելով «Փունկցիոնալ գեմոկրատիայի» թեորիան,
կանգնած լինելով «հանրապետության շինարարու-
թյան, ալյունքն բուրժուական պետության շինարա-
րության տեսակետի վրա, պատրամարքսիզմն հանձ-
նարարում և «գասակարգերի կոռպերացիա» այսպես
կոչված «գասակարգային ուժերի հավասարակշռու-
թյան» ժամանակաշրջաններում, այսինքն հենց այն
ժամանակ, իրբ հոսում անում և նեղափոխական կրի-
զիսը: Այս քերիան արդարացումն և նշանակում

բուրժուազիայի հետ կոպակիցիա կնքելու՝ պրոլետարիան հեղափոխությունը տապալելու նպատակով՝ «գեմոկրատիան» ռեակցիացի հարձակումից պաշտպանելու դիմակի տակ: Որյեկտիվորեն և գործնականում այն բոնությունը, վոր թուզարդում և ավստրամարքսիզմի կողմից ռեակցիայի հարձակման դեպքերում, դառնում և ռեակցիայի բոնություն պրոլետարիատի հեղափոխության դեմ: Ավստրամարքսիզմի «Փունկցիոնալ գերը» կայանում և այն բանվորների խարեւության մեջ, վորոնք արդեն գնում են դեպի կոմմունիզմ, ուստի և ավստրամարքսիզմը հանդիսանում և պրոլետարիատի առանձնապես վտանգավոր թշնամին, ավելի վտանգավոր, քան ավաղակալին սոցիալ-իմպերիալիզմի բացահայտ կողմանակիցները:

Յեթե այս բոլոր հոսանքները, «առցիւլիստական» ռեփորմիզմի բաղկացուցիչ մասերը լինելով, իմպերիալիստական բուրժուազիայի գործակալությունն են հանդիսանում բանվոր դասակարգի մեջ, ապա, մյուս կողմից, կոմմունիզմը ընդհարվում է մի շարք մանր-բուրժուական հոսանքների հետ, վորոնք արտացոլում են արտահայտում են հասար, անկայուն խավերի յերերումը (քաղաքային մանր բուրժու, քաղաքային քայլքայվող քաղքենիստությունը, լուումպեն-պրոլետարիատը, ինտելիգենտական ավաղասակարգայնացած բոհեման, աղքատացող արհեստավորները, գյուղացիության միքանի խավերը և այլն և այլն): Աչքի ընկնելով քաղաքական ծայրահեղ անկայունությամբ, այդ հոսանքները հաճախ ձախ ֆրազաբանությունը ծածկում են աջ քաղաքականությունը կամ ընկնում ավանդութեզմի մեջ, ուժերի ոբյեկտիվ հաշվառքը փոխարի-

նելով քաղաքական ճշան շարժուձերով, հաճախ հեղափոխական անհրեսակացելի սնապարձությունից անցնելով խորագույն հոռեւտեսության և խսկական անձնագործյան՝ թշնամու առաջ: Այս հոսանքները վորոշացմաններում, մանավանդ քաղաքական կացության կորուկ վիստիփոխությունների պատճին և ժամանակավոր նահանջի անհրաժեշտության դեպքում, կարող են դառնալ պրոլետարիատն շարքերի ամենավտանգավոր կազմակուծողները և զրանով խոկ՝ պրոլետարիատի հետափոխական շարժման արգելակը:

Անարիսիզմը, վորի ամենաականավոր ներկայացուցիչները (Կրոպոտկին, Ժան Գրավ և ուրիշները) 1914—1918 թ. թ. պատերազմի ժամանակ դավաճանորեն անցան իմպերիալիստական բուրժուազիայի կողմը, ժիտում և պրոլետարիատի լայն, կենտրոնացած և դիսցիպլինի լութարկված կազմակերպությունների անհրաժեշտությունը և դրանով խոկ նրան թողնում են անզոր կապիտալի հզոր կազմակերպությունների հանդեպ: Անհատական տերրոր քարոզելով, նաշեղում և պրոլետարիատին մասսայական կազմակերպություններից պության և մասսայական պատքարի մեթոդներից: Ժիտուլով պրոլետարիատի դիկտատուրան հանուն վերացական «ազատության», անարիսիզմը զրկում է պրոլետարիատին կարենորագույն և ամենասուր զորածիքից՝ լնդդիմ բուրժուազիայի, նրա զորքերի, նրա բոլոր պատժիչ որդանների: Հեռու լինելով վորնեասսայական շարժուժից՝ պրոլետարիական պատքարի կարենորագույն կինտրոններում, անարիսիզմն ավելի ու ավելի ին դառնում մի աղանդ, վորն իր ամբողջ տակտիկայով և իր բոլոր լինուէլներով, այդ թվում և

ԽՍՀՄ հաստատված բանվոր դասակարգի դիկտատուրապատճեմի դեմ ունեցած լեռությներով՝ ոբյեկտիվորեն իրեն ներառում և հականեղափոխական ուժերի միասնական ֆրոնտի մեջ:

«Հեղափոխական» սինդիկալիզմը, վորի իդեոլոգիայից շատերը պատերազմի ամենակրիտիկական շրջանի ժամանակ անցան փաշխտական տիպի «հակապարլամենտական» հականեղափոխականների բանակը կամ դարձան սոցիալ-դեմոկրատական նմուշի խաղաղ ռեֆորմիստներ, անարխիզմի նման, պրոլետարիատի հեղափոխական պայքարի (մասնավորապես հեղափոխական պարլամենտարիզմի) և հեղափոխական դիկտատուրայի իր բացասումով, բանվորական շարժման մեջ առհասարակ, մանավանդ արհեստակցական շարժման մեջ համբարացին ապակենաբրոնացման իր քարոզով պլուստարիատի կուսակցության իր բացասումով, առլսամբության անհրաժեշտության իր բացասումով և ընդհանուր զործադուի («ծալած ձեռքերի տակտիկա») իր գերազնահատությամբ խանգարում և բանվորական մասսաների հեղափոխականացմանն ամենուրեք, վորտեղ նա ունի վորիե ազգեցություն։ Նրա հարձակումներն ընդգեմ ԽՍՀՄ, վորոնք կապված են առհասարակ պրոլետարական դիկտատուրայի բացասման հետ, նրան այս տհամկետից դնում են սոցիալ-դեմոկրատիայի շարքը։

Այս բոլոր հոսանքներն ու ուղղությունները համարծիք են սոցիալ-դեմոկրատիային՝ պրոլետարական հեղափոխության այդ գլխավոր թշնամուն՝ քաղաքականության հիմնական հարցում, պրոլետարիատի դիկտատուրայի հարցում։ Ուստի նրանք ավելի կամ վորոշակի հանդես են գալիս ընդգեմ ԽՍՀՄ սո-

յիտը դեմոկրատիայի հետ մի ֆրոնտում։ Մյուս կողմից, լիովին և ամբողջովին մարքսիզմին դավաճանած սոցիալ-դեմոկրատիան ավելի ու ավելի յե հենվում ֆարիականների, կոնստրուկտիվ և գիլդիական սոցիալիստների իդեոլոգիայի վրա։ Այդ հոսանքները դառնում են Յերկրորդ ինտերնացիոնալի բուրժուատական «սոցիալիզմի» լիբերալ-ռեֆորմիստական պաշտոնական իդեոլոգիան։

